

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Երտողանի «Ձգուելի» Խօսքերը Ու Հայաստանի Վճռական Կեցուածքը

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայթէ Երտողան վերջին օրերուն հանդէս եկաւ մէկէ աւելի յայտարարութիւններով, որոնք բացայայտ ատելութեամբ լեցուած էին Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին հանդէս:

Տարի մը առաջ Հայ ժողովուրդին ցաւակցութիւն յայտնող Երտողանը, տեղահանումի ու ջարդի ենթարկուած հայերը կը բնութագրէր որպէս «հայկական հրոսակախումբեր եւ անոնց կողմնակիցներ» ու կ'աւելցնէր որ «Հայերու տեղահանութիւնը ոչ ցեղասպանութիւն էր, ոչ ալ մեծ աղէտ»:

Հայաստան չուշացաւ վճռականօրէն ու ամենէն բարձր մակարդակով հակազդելու Երտողանին: Վարչապետ Նիկոլ Փաշինեան թուրքիոյ նախագահի այս խօսքերը նկատեց արդարացում գործադրուած Ցեղասպանութեան: ՀՀ Արտաքին գործոց նախարարութիւնը պաշտօնական յայտարարութեամբ մը եկաւ յայտնելու թէ Թուրքիոյ վարչապետը վիրաւորանք են Ցեղասպանութեան զոհերուն ու անոնց իրաւաւորութեան զոհերուն, միաժամանակ կոչ ընելով միջազգային հանրութեան դատաւարտելու Երտողանի անմարդակային արտայայտութիւնները:

Երտողան իշխանութեան եկաւ կրօնական կարգախօսերով ու յաջողեցաւ այդ ալիքի եւ տնտեսական գետնի վրայ արձանագրուած յաջողութիւններուն շնորհիւ 2003 թուականէն ասդին մնալ իշխանութեան վրայ՝ նախ որպէս վարչապետ ապա դառնալով նախագահ: Ներկայիս Թուրքիոյ տնտեսութիւնը կը գտնուի քայքայման եզրին ու Երտողանի ժողովրդականութիւնը անկումի մէջ է: Կրօնամոլ խաւերու ձայները այլեւս բաւարարեն չեն զինքն աթոռին պատելու համար, ինչպէս ցոյց տուին մայրաքաղաք Անգարայի եւ Երկրի ամենէն կարեւոր քաղաքը հանդիսացող Իսթանպուլի մէջ անոր պաշտպանած թեկնածուներու կրած վերջին պարտութիւնները:

Ըստ Երեւոյթին Երտողան որոշած է նաեւ խաղալ ազգայնական լարին վրայ, որպէս թիրախ ընտրելով Հայոց Ցեղասպանութեան յիշատակը, յուսալով որ այդպիսով պիտի սիրաշահի Երկրի ազգայնամուլ տարրերը:

Երտողան իր այս կեցուածքով ինքզինքն ու Թուրքիան դրաւ պատմական ծանր պատասխանատուութեան մը առջեւ:

Այս առթիւ պէտք է փոխ առնել Ամերիկեան Գոնկրետէն ներս Հայկական Համախմբումի համանախագահ Ֆրէնք Փալոնի խօսքը, որ կու գար Թուրքիոյ նախագահի արտայայտութիւնները կոչելու «զգուելի»:

«ՄԱՍԻՍ»

## Հայաստան Կոչ Կ'ընէ Միջազգային Հանրութեան՝ Խստօրէն Դատաւարտելու Երտողանի Ցեղասպանութեան Չոհերուն Հասցուցած Վիրաւորանքը

Հայաստան կոչ ըրաւ միջազգային հանրութեան՝ խստօրէն դատաւարտելու Հայոց Ցեղասպանութեան զոհերու եւ զայն վերապրածներու յիշատակին եւ արժանապատուութեան թուրքիոյ նախագահի հասցուցած վիրաւորանքին կապակցութեամբ:

Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած պաշտօնական յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած էր.

«Ապրիլ 24-ին, աշխարհի բոլոր անկիւններուն մէջ, հայերը՝ հայ ժողովուրդի եւ մարդկութեան բարեկամներու հետ միասին ոգեկոչեցին Հայոց Ցեղասպանութեան 104-րդ տարելիցը: Բազմաթիւ ժողովուրդներ, համայնքներ եւ հասարակութիւններ միացան այս ոգեկոչման՝ ամբողջ աշխարհի մէջ: Մենք երախտապարտ ենք անոնց բոլորին՝ աշխարհի տարբեր երկիրներու առաջնորդներուն, խորհրդարանականներուն, բարերարներուն, զիտնականներուն,

լրագրողներուն եւ մարդու իրաւունքներու պաշտպաններուն՝ Հայոց Ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերու յիշատակի օրը հայ ժողովուրդի կողքին կանգնելու համար:

Այնուամենայնիւ, թուրքիան կը շարունակէ կառչած մնալ ժխտողականութեան խորշիկ քաղաքականութեան՝ ցուցաբերելով Ցեղասպանութեան զոհերու արժանապատուութեան ու յիշատակին հանդէպ վիրաւորանք եւ անցեալի հետ առերեսուելու անկարողութիւն, որ կրկին արտացոլուեցաւ թուրքիոյ նախագահի՝ այս տարուան Ապրիլ 24-ի ուղերձին մէջ: Ցեղասպանութեան զոհերու անուանարկումը՝ իբրեւ «հայկական հրոսակախումբերու եւ անոնց կողմնակիցներու» առաւել վիրաւորական է եւ ցաւալի», ըսուած էր յայտարարութեան մէջ:

«Հայաստան կոչ կ'ընէ միջազգային հանրութեան՝ խստօրէն դատաւարտելու Հայոց Ցեղասպանութեան զոհերու եւ զայն վերապ-



րածներու յիշատակին եւ արժանապատուութեան ուղղուած վիրաւորանքը եւ առաւել վճռական քայլեր ձեռնարկելու՝ ժողովուրդները ցեղասպանութենէ պաշտպանելու պետութիւններու պատասխանատուութեան ամրապնդման, անպատժելութեան դէմ պայքարի եւ նմանօրինակ յանցագործութիւններու, ինչպէս՝ անոնց հրահրման

Շար.ը էջ 5

## Երեւանի Մէջ Կայացաւ Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի Նիստ



Երեւանի մէջ կայացած ԵԱՏՄ ժողովի մասնակիցները

Ապրիլ 30-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի նախագահութեամբ Երեւանի «Կարէն Տեմիրճեանի» անուան մարզահամերգային համալիրին ներս կայացաւ Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի հերթական նիստի աշխատանքները:

Նեղ կազմով նիստին, որուն մասնակցած էին միասին Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) անդամ երկիրներու կառավարութիւններու ղեկավարները, յաջորդած է ընդլայնուած կազմով նիստը:

Նեղ կազմով նիստի բացման ժամանակ Փաշինեան յայտարարած է, որ օրակարգի վրայ եղող

երեք հիմնական հարցերը կը վերաբերին թուաչին օրակարգին, առցանց առեւտուրին եւ Եւրասիական տնտեսական միութեան հետագայ ընդելուզման, ընդելուզման խորացման:

Ընդլայնուած կազմով նիստին Փաշինեանը խօսած է Հայաստանի մէջ փտածութեան դէմ պայքարի, ժողովրդավարութեան կայացման մասին:

Ինչ կը վերաբերի ԵԱՏՄ-ին, ան նշած է, որ Հայաստանը շահագրգռուած է առկա խոչընդոտներու վերացմամբ, եւ առանձնապատու կանգ առած է, ինչպէս

Շար.ը էջ 5

## Փորթուկալի Խորհրդարանը Ծանցցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Փորթուկալիոյ խորհրդարանը ծանցցած է Հայոց Ցեղասպանութեան փաստը: Ճանաչման նիստը կայացած է 26 Ապրիլին Փորթուկալիոյ մայրաքաղաք Լիզպոնի մէջ:

Բանաձեւին մէջ նշուած է, որ 1915-ի Ապրիլի 24ին երիտթուրքերու կառավարութեան հրամանով բանտարկուած, ապա սպանուած են շուրջ 250 հազ մտաւորականներ եւ հասարակական առաջնորդներ: Արձանագրուած է, որ 800 հազարէն մինչեւ 1.5 միլիոն հայեր ցեղասպանութեան զոհ դարձած են:

«Օսմանեան իշխանութեան կողմէ հայերու սխառնատիկ բնաջնջումը պատմաբաններու միջազգային հանրութեան կողմէ կը համարուի 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը», ըսուած է բանաձեւին մէջ:

Փորթուկալիոյ խորհրդարանը ցաւ կը յայտնէ հայերու ցեղասպանութեան զոհերու կապակցութեամբ՝ անոնց յիշատակը դիտարկելով որպէս ժողովուրդներու հաշտեցման եւ մարդու հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հական տարր: Բանաձեւին մէջ նաեւ կը նշուի, որ թէեւ օսմանեան ռազմական դատարանները ցեղասպանութեան կազմակերպիչներուն 1919-1920-ին դատաւարտած են մահապատժի, սակայն այդ դատավճիռները կեանքի չեն կոչուած:

# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Խօսե՛լ, Թե՛ Զխօսել. Այս է Խնդիրը

### ՆԱՅԻՐԱ ՎԱՆԵԱՆ

Եւ այսպէս գոյություն ունի տարին, երբ Սերժ Սարգսեանը մի գլուխկոտրուկ միտք յայտնեց ու հրաժարական տուեց: Չլուծուող հանելուկ դարձաւ այն, թէ ինչ ասաց Սարգսեանը՝ Նիկոլը ճիշտ էր, ինքը՝ սխալ: Այն, որ Նիկոլը կարող է ճիշտ լինել, հասարակութեան զգալի մասը չի կասկածում՝ առայժմ չի կասկածում: Նոյն հատուածը նաեւ համոզուած է, որ Սերժ Սարգսեանը կարող է սխալ լինել, բայց կոնկրետ ո՞ր սխալը նկատի ունէր, երբ տալիս էր հրաժարականը: Սա է հարցերի հարցը, որ ուզում է իմանալ հասարակութիւնը եւ յատկապէս՝ լրագրողական համայնքը: Եթէ Սարգսեանը սա ասած լինէր բանաւոր խօսքում, կարելի էր մտածել, թէ՛ դէ, մարդ էր, մի բան ասաց, երեւի ինքն էլ չի մտածել, թէ ինչու ասաց, բայց խօսքը եղել է գրաւոր, իսկ գրաւոր խօսքում բովանդակային վրիպումները գրեթէ բացառուած են, մանաւանդ, որ այդ խօսքի վրայ մի ամբողջ թիւ է աշխատում:

Նաեւ հաշուի առնենք, որ Սարգսեանը Հայաստանի թիւ մէկ շախմատիստն է, ուստի այս խօսքը պատահական լինել էր կարող: Իսկ այն չեն գաղտնագործում ո՛չ Սարգսեանը, ո՛չ էլ նրա թիւմակից հաւատարիմները, ասենք՝ Շարմազանովը կամ Աշոտեանը: Ի՞նչ է սա, իր շուրջը խորհրդավորութիւն ստեղծելու եւ հետաքրքրութիւնը պահելու խորամանկ միջոց, թէ՛ պարզապէս Սարգսեանն այդ պահին զգացել է, որ Նիկոլը ճիշտ է այն հարցում, որ հասարակութիւնն իրեն չի ընդունում: Յիշենք, թէ ինչպէս էր այդ օրերին ողջ հանրապետութիւնը ոտքի կանգնել եւ մերժում Սերժին: Եւ գուցէ հիմա, տեսնելով Փաշինեանի վարկանիշի օրէցօր անկումը, չի ուզում խոստովանել իր այդ զգացողութիւնը: Ինչեւէ, հիմա էլ մէկ այլ գլուխկոտրուկ են ստեղծել՝

«Սերժ Սարգսեանը կը խօսի», - պարբերաբար յայտարարում են էդուարդ Շարմազանովն ու Արմէն Աշոտեանը: Սարգսեանն ինքն էլ է ասում, որ երբ ժամանակը գալ, կը խօսի: Այնպիսի տպաւորութիւն է, թէ մերժուածներն արհեստականօրէն ուզում են «կը խօսի-չի խօսի» հարցադրումը դարձնել հասարակութեանը հետաքրքրող թիւ մէկ հարցը եւ ժամանակն այնքան ձգեն, մինչեւ Փաշինեանի վարկանիշը հասնի ամենացածր կէտին:

Ի վերջոյ, ի՞նչ կարող է խօսել մի երկրի նախկին ղեկավար, որի հրաժարականի լուրը դարձաւ համաժողովրդական սոնախմբութեան առիթ, մարդիկ հրավառութեամբ, քեֆ-ուրախութեամբ, որոշ տեղերում մատաղի արարողութեամբ տօնեցին այդ հրաժարականը: Այն տօնում էին նաեւ արտերկրում ապրող հայերը: Սա, բնականաբար, տեսել է երկրի թիւ մէկ մերժուածը, որի ղեկավարութեան օրօք իշխանութեան եւ ժողովրդի միջեւ ստեղծուել էր անանցանելի անդունդ: Դրա պատճառները բազմաթիւ էին ու տարբեր, որոնց հիմա չենք անդրադառնալ: Համաժողովրդական այս ուրախութիւնը տեսնելուց յետոյ ո՞ր նախկին ղեկավարի՝ գլխաւոր մերժուածի արժանապատուութիւնը թոյլ կը տայ նորից խօսել: Պէտք է խոստովանենք, որ Սերժ Սարգսեանը հեռացաւ արժանապատիւ ձեւով՝ առանց արեան ու բռնութեան: Նրա հեռանալը նոյնիսկ նման է իշխանութեան խաղաղ յանձնման. նա թոյլ տուեց, որ մի քանի հոգուց բաղկացած քայլերով ձեռնադրի նման գնալով մեծանայ, մինչդեռ դա կասեցնելու բոլոր եղանակներին նախկինները լաւ են տիրապետում: Էլ չենք խօսում այն մասին, որ կային յարմար պահեր, երբ «օրէնքի սահմաններում» կարող էին ձեռքարկել Փաշինեանին եւ իր թիւմակիցներին, եւ ամէն ինչ կը լինէր այնպէս, ինչպէս միշտ:

Խօսքը վերաբերում է կոնկ-

րետ ռազմավարական նշանակութիւն ունեցող Ռադիոտուն մտնելուն: Ի՞նչ էր սա, Սարգսեանն ու Փաշինեանն ունէին ներքին պայմանաւորութիւններ, թէ՛ Սարգսեանը պարզապէս յոգնել էր իշխանութիւնից, դրա համար պայքարելուց եւ արդէն ուզում էր տեսնել, թէ իրադարձութիւններն ինչպէս են զարգանալու, ինչպէս են իրեն մերժելու: Եւ նա տեսաւ համաժողովրդական բացասական վերաբերմունքն իր հանդէպ, մերժումը, ատելութիւնը, այսքանից յետոյ ի՞նչ է ասելու իրեն մերժող, չսիրող հասարակութեանը երկրի նախկին ղեկավարը: Այո, այսօր գնալով խորանում է հիասթափութիւնը Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնից, որի մէկամեայ կառավարումը ոչ մի ոլորտում յաջողութիւն չի գրանցել, ու հասարակութեան զգալի մասն արդէն ակնյայտ դժգոհ է նրա տնտեսական, կազմակերպչական, քաղաքականութիւնից, օտարամիտ բարեքերի «ազատականացումից»: Բայց սա դեռ չի նշանակում, թէ մարդիկ ուզում են անցեալի՝ Սերժ Սարգսեանի վերադարձը կամ պատրաստ են դրան: Իհարկէ, ո՛չ:

Օրերս երրորդ նախագահը հանդիպեց ՀՀԿ-ին անդամագրուող երիտասարդների հետ: Եթէ նախկինում այդ երիտասարդներով մի ամբողջ մարզահամերգային համալիր էր լցւում, ապա այսօր, ինչպէս ասում են, մի «գագել» ժողովուրդ էր հաւաքուել:

Այս հանդիպումով Սարգսեանը կամաց-կամաց հանրութեանն աղապատացնում է իր՝ քաղաքականութիւն վերադառնալու մտքին: Սակայն մոռանում է, որ իր «գնացքն արդէն մեկնել է, սիրելիներն էլ չկան» □ Եթէ նրա քաղաքական յենարանը ՀՀԿ-ական նախարարներն էին, նրանք այլեւս չկան, օլիգարխներին շատերը «չաքար» յարաբերութիւն են ստեղծել նոր «թագաւորի» հետ, ՀՀԿ-ական համայնքապետերն էլ վաղուց անցել են Փաշինեանի «թրի տակով»՝ հաւատարմութեան երդում տուել, ու դրել են «դուխով» գլխարկներ:

րը: Ի՞նչ քաղաքական հենքի վրայ է ուզում «խօսել» Սարգսեանը: Մի՞թէ նրա յոյսը մի քանի երդուեալ, հաւատարիմ թիւմակիցներն են՝ Շարմազանովը, Աշոտեանը եւ էլի մի քանի հոգի, որոնց արտայայտած ամէն մի միտքը, որքան էլ ճիշտ լինի եւ դիպուկ, յայտնում է հասարակութեան թիրախում, քանի որ նրանք լիչեցնում են Սերժ Սարգսեանին: Ու որքան շատ է Սարգսեանի՝ քաղաքականութիւն վերադառնալու հեռանկարն ուրուագծուած, այնքան նրանց արտայայտած խօսքերն արժեքգրկուած են: ՀՀԿ-ում եղել են ու կան առողջ, փորձառու, պրոֆեսիոնալ մարդիկ, որոնք անհրաժեշտ են այսօրուայ քաղաքական կեանքին՝ թէկուզ որպէս ընդդիմադիր ուժեր: Այդ մարդիկ առանց Սերժ Սարգսեանի աւելի ընկալելի եւ վստահելի կը լինեն հասարակութեան կողմից, քան Սերժ Սարգսեանի հետ միասին:

Ուստի, եթէ Սարգսեանն ուզում է, որ իր պրոֆեսիոնալ կուսակից-թիւմակիցները քաղաքականութեան մէջ կարողանան իրենց խօսքն ասել, իսկ կուսակցութիւնը ռեբրենդինգի ենթարկուի, ապա ինքը ինչպէս արժանապատուօրէն հրաժարական տուեց երկրի ղեկավարի պաշտօնից, ճիշտ կը լինի, որ այդպէս էլ հրաժարական տայ կուսակցութեան առաջնորդի պաշտօնից: Բայց, կարծես թէ, Սարգսեանի քաղաքական էգոիզմը թոյլ չի տալիս, որ կուսակցութիւնն առանց իրեն մի քայլ առաջ գնայ. եթէ խորտակոււմ է ինքը, ապա թող ջրի տակ անցնեն իր նաւում եղած բոլորը: Իսկ ինչ վերաբերում է խօսելուն, ապա ո՛չ ինքը, ո՛չ էլ առաւել եւս հասարակութիւնը պատրաստ չեն այդ խօսքին: Մի քանի տարի յետոյ՝ գուցէ:

« ՀՐԱՊԱՐԱԿ »

## Վարչապետի Ուղերձը Նաեւ Ատրպեյճանի Զանրութեանն էր Ուղղուած

ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում տեղի ունեցած հանդիպման ժամանակ վարչապետ Փաշինեանն անդրադարձել է նաեւ արցախեան հիմնախնդրի կարգաւորմանը եւ յայտարարել, որ մինչեւ հիմա այդ թեմայի շուրջ հանրային դիսկուրս չի եղել: Այսպիսին՝ հայ ժողովուրդը չի ձեւաւորել իր պատկերացումները վերջնական նպատակի վերաբերեալ եւ ՀՀ վարչապետին յստակ յանձնարարական չի տրուել՝ «գնայ եւ հարցը լուծիր այնպէս, որ այդ նպատակին հասնենք»: Սա շատ կարեւոր արձանագրում է, որովհետեւ իսկապէս էլ՝ եթէ հանրութեան կողմից կարգաւորման գործընթացի վերջնական պատակը յստակեցուած չէ, բանակցութիւնների սեղանի շուրջ հայկական կողմի դիրքորոշումների «ճիշտ» կամ «սխալ» լինելու շուրջ խօսակցութիւններն անիմաստ են դառնում: Ի՞նչ իմաստ ունի քննարկելը՝ ճիշտ ճանապարհով ես գնում, թէ սխալ, եթէ որոշուած չէ, թէ ուր ես ուզում հասնել:

Իսկ ո՞ւր ենք ուզում հասնել: Առաջին հայեացքից կարող է թուալ,

թէ հարցի պատասխանը միանշանակ է, բայց իրականում տարբերակները բազմաթիւ են (յամենայն դէպս՝ տեսականօրէն): Օրինակ՝ եթէ վերջնականապէս պատմական արդարութիւնն է եւ մեր պատմական հայրենիքի ամբողջականութեան վերականգնումը, բանակցութիւնների սեղանի շուրջ փոխզիջումների մասին ընդհանրապէս խօսք լինել չի կարող: Աւելին՝ պէտք է բարձրացնել նաեւ դաշտային Արցախի հարցը, Նախիջեւանի հարցը, յետագայում՝ Արեւմտեան Հայաստանի հարցը, եւ այլն: Ու գուցահեռաբար փորձել աշխարհին համոզել, որ դա արդարացի է, եւ աշխարհը պիտի մեզ օգնի հասնել այդ նպատակին: Կամ եթէ այս գործընթացի վերջնականապէս խաղաղութեան հաստատումն է՝ այնպէս, որ Արցախի անվտանգութեանը ոչինչ չհասցնայ, ուրեմն պէտք է իշխանութիւնների առջեւ շատ յստակ այդ պիտի պահանջ դնել եւ պատուիրակել, որ իշխանութիւնները գնան եւ ոնց ուզում են՝ լուծեն այդ հարցը: Թող իրենք որոշեն՝ Արցախի անվտանգութեան համար «Հայաս-

տանի հետ յուսալի ցամաքային կապը» բաւարար է, թէ՛ անվտանգութեան գոտին դեռ մի բան էլ պէտք է ընդլայնել:

Հասկանալի է, որ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնութիւնը կտրականապէս դէմ է անգամ մէկ թիզ տարածք գիջելուն, բայց մի բան է, երբ դէմ է, որովհետեւ դա ընկալում է որպէս պատմական հայրենիքի վերականգնման ճանապարհին արուած կարեւոր քայլ, եւ բոլորովին այլ բան, երբ դէմ է, որովհետեւ ցանկացած տարածքային գիջում կը վնասի Արցախի անվտանգութեանը, հետեւաբար՝ նաեւ վերջնական խաղաղութեան հաստատմանը: Կամ, եթէ վերջնականապէս ստատուս-քուոյի պահպանումն է, ուրեմն ժողովուրդը ՀՀ իշխանութիւններին պիտի պատուիրակի գնալ եւ վարպետօրէն ձգձգել բանակցութիւնները՝ գուցահեռաբար ամրապնդելով տնտեսութիւնն ու բանակին այնպէս, որ Ատրպեյճանը երբեք ռազմական ծանրակշիռ առաւելութիւն չստանայ մեր նկատմամբ:



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com


(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յեղափոխութենէն Ետք Ստուերէն Դուրս Եկած Է Եւ Կամ Ստեղծուած Է Շուրջ 50 Զագար Աշխատատեղ. Փաշինեան



Ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան ցոյց կու տայ նոր աշխատատեղերու ցուցակը

2019 թուականի Յունուարին Հայաստանի Հանրապետութեան մէջ արձանագրուած է 562 հազար 43 աշխատատեղ՝ 2018 թուականի 511 հազար 902 աշխատատեղի դիմաց, եւ աճը 2019 թուականի Յունուարին՝ 2018 թուականի Յունուարի նկատմամբ, կազմած է 50 հազար 141, ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակմամբ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Անոր փոխանցմամբ, այսպիսով յեղափոխութենէն ետք Հայաստանի մէջ ստուերէն դուրս եկած է եւ կամ ստեղծուած է շուրջ 50 հազար աշխատատեղ:

Սա թիւ է, որ, ըստ վարչապետին, չի կրնար կասկածի տակ առնուիլ:

«Երբ այս թիւը ես հնչեցրեցի ԵՆՆՎ ամպիոնից, բազմաթիւ հրապարակային յայտարարութիւններ հնչեցին, որ կասկածի տակ էին առնում այդ թիւը: Կարող է այս թուերն իրական չլինեն, չի կարող լինել այդպիսի բան, որովհետեւ այս թուերը ձեւաւորուել են ձեռնարկութիւնների, ընկերութիւնների ներկայացրած հարկային հաշիւների հիման վրայ: Այսինքն՝ եթէ ընկերութիւնն ինքը, ոչ թէ մենք ենք յայտարարագրել, զնացել յայտարարել էր աշխատատեղերը, այլ մարդիկ իրենք հարկա-

յին հաշուետուութիւնների հետ ներկայացրել են աշխատատեղերի իրենց թիւը, եւ մենք ունեցել ենք այսպիսի պատկեր: Սա նշանակում է, որ այս աշխատողների համար ընկերութիւնները, իրաւաբանական անձինք, անհատ ձեռներէցները հաշուետուութիւն են ներկայացնում, որովհետեւ այստեղ հաշուետուութիւն կայ, որ անհատ ձեռներէցների մօտ էլ են աշխատատեղեր գրանցուել, եւ իրենք, փաստօրէն, հարկային հաշուետուութիւններում ներկայացնում են այս աշխատատեղերը, ինչը նշանակում է, որ նրանք արդէն պաշտօնապէս արձանագրուած աշխատատեղեր են, եւ դրա համար սրանից բխող որոշակի հարկային պարտաւորութիւններ են կատարուում, եւ սա, ըստ էութեան, թիւ է, որը չի կարող որեւէ կերպ կասկածի տակ առնուել, եթէ անհատները իրենք չեն, մենք ըստ ընկերութիւնների կարող ենք իմանալ, թէ որ ընկերութիւնն ինչքան աշխատատեղերի աւելացում է տուել», - ըսած է Փաշինեանը:

Վարչապետը սա համարած է ոչ թէ Հայաստանի կառավարութեան յաջողութիւն, այլ գործարարներու, քաղաքացիներու, ընկերութիւններու գիտակցութեան բարձրացման հետեւանք:

2008-ին Նախագահական Թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի Խաղաղ Հաւաքներու Ազատութիւնը Խախտուած Է. ՄԻԵԴ

Մարդու իրաւունքներու եւ րոպական դատարանը (ՄԻԵԴ) «Լեւոն Տէր-Պետրոսեանն ընդդէմ Հայաստանի» գործով հրապարակած վճիռով արձանագրած է, որ 2008 թուականի մարտեան հաւաքի խաղաղ ընդթրը հերքող որեւէ ապացոյց Հայաստանի կառավարութիւնը չէ ներկայացուցած:

Գործը Եւրոպական դատարանին մէջ ներկայացուցած փաստաբան Վահէ Գրիգորեանը «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ տեղեկացուցած է, որ Եւրոպատարանը, հիմք ընդունելով «Մուշեղ Սաղաթէյեանն ընդդէմ Հայաստանի» գործով իր նախկին դիրքորոշումը, եզրահանգած է՝ խաղաղ հաւաքի ցրումը հիմնաւորուած չէ եղած, վկայակոչուած են կասկածելի հանգամանքներ, ուժային միջամտու-

թեան առաջ նախապէս զգուշացում չէ եղած: Ինչի հետեւանքով, Եւրոպական դատարանի հրապարակած վճիռի համաձայն՝ 2008-ին նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի խաղաղ հաւաքներու ազատութիւնը խախտուած է:

«Մարտի 1-ի վաղ առաւօտեան նստացոյցը, որը որպէս խաղաղ հաւաք է գնահատուում, ցրելը, նամանաւանդ էնպիսի ուժային միջամտութեամբ, ինչպիսին դրսեւորուել է այդ օրն առաւօտեան, լիովին հակասահմանադրական ու հակօրինական է եղել», - ըսած է Գրիգորեանը:

ՄԻԵԴ-ը նաեւ արձանագրած է՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը Հայաստանի մէջ արդիւնաւէտ պաշտպանութեան հնարաւորութիւն չէ ունեցած:

Սանասարեանի Սեղադրանքը Ամբողջութեամբ Հիմնաւորուած Սեղադրանք Է. Վանեցեան

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն Արթուր Վանեցեանը խնդիր չի տեսներ, որ Պետական վերահսկողական ծառայութեան (ՊՎԾ) պետ Դաւիթ Սանասարեանի գործի վարչութիւնը ԱԱԾ-էն տեղափոխուի Յատուկ քննչական ծառայութիւն (ՅՔԾ):

«Երբ որ քրէական գործը յարուցուել է, ի սկզբանէ ոչ թէ Դաւիթ Սանասարեանին է մեղադրանք առաջադրուել, այլ քրէական գործը յարուցուել է «Զօրաշէն» ՍՊԸ-ի կողմից իրականացուած անօրինականութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու հիման վրայ: Այդ ժամանակ ՅՔԾ-ի առարկայ էր հանդիսանում այդ քրէական գործով անցնող անձը: Այդ իսկ պատճառով գործը գտնուում է ԱԱԾ-ի քննչական բաժնի վարչութում: Ես տեղեկ եմ, որ պարոն Սանասարեանի փաստաբանները դիմել են գլխաւոր դատախազին՝ խնդրելով վարչութիւնը տեղափոխել ՅՔԾ: Անկեղծ ասած, որեւէ խնդիր չեմ տեսնում այդ տեղափոխման հետ կապուած, ես մէկ վայրկեան կասկած չունեմ, որ մեր քննիչներն աշխատում են օրէնքի շրջանակում», - լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամանակ ըսած է Վանեցեանը:

Սանասարեանի փաստաբաններու պնդումներուն, թէ «Սանասարեանի վրայ գործ է կարուում», Վանեցեանը այսպէս արձագանգած է. - «2018-ի Ապրիլին տեղի ունեցած յայտնի իրադարձութիւններից յետոյ գործ կարելու, գործ սարքելու դէպքեր չեն եղել: Մենք բոլորս կառուցում ենք իրաւական պետութիւն, եւ Ազգային Անվտանգութեան ծա-



ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեան

ռայութիւնն այդ գործում ունի իր առանցքային դերակատարութիւնը»:

Վանեցեանը նշած է՝ մեղադրանքը, որ առաջադրուած է Դաւիթ Սանասարեանին այս պահին ամբողջութեամբ հիմնաւորուած է տարբեր մարդոց ցուցմունքներով, կատարուած առերեսումներով: «Բաց չխախտելով պարոն Սանասարեանի անմեղութեան կանխավարկածը՝ յորդորում եմ բոլորին մի քիչ համբերել, երբ գործն ուղարկուի դատարան», - ըսած է ԱԱԾ տնօրէնը:

Յիշեցնենք, որ Թաւշեայ յեղափոխութեան առանցքային դէմքերէն Դաւիթ Սանասարեանը անցեալ շաբաթ որպէս մեղադրեալ ներգրաւուեցաւ քրէական գործի մէջ՝ պաշտօնական լրագրութիւնները չարաշահելու համար: Անոր նկատմամբ խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւնը չհեռանալու մասին:

Հրապարակուեցաւ Քոչարեանի Եւ Միւսներու Գործով Սեղադրական Եզրակացութեան Համառօտ Բովանդակութիւնը

Հրապարակուած է Ռոպերթ Քոչարեանի եւ միւս նախկին բարձրաստիճան պաշտօնեաներու գործի մեղադրական եզրակացութեան համառօտ բովանդակութիւնը:

Երկրորդ նախագահ Քոչարեանին, մասնաւորապէս, մեղադրանք առաջադրուած է, որ մինչեւ 2008 թուականի 9 Ապրիլը զբաղեցնելով նախագահի պաշտօնը, Սահմանադրութեան ուժով հանդիսանալով պետութեան գլուխը եւ կրելով Սահմանադրութեան հետեւելու, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւններու բնականորէն գործունէութիւնը ապահովելու պարտականութիւններ, ինչպէս նաեւ օժտուած ըլլալով մշտապէս կազմակերպչական-անօրինչական եւ վարչատնտեսական գործառնութիւնը իրականացնող պաշտօնատար անձի լրագրութիւններով, այլ անձերու հետ յանցակցութեամբ, տապալած է սահմանադրական կարգը:

Ըստ միւս մեղադրանքի, Քոչարեանը իր պաշտօնական դիրքը օգտագործելով «Թի էս էս Սի Արմէնիա» ՍՊ ընկերութեան միակ մասնակից եւ տնօրէն Սիլվա Համբարձումեանի օգտին գործողութիւններ կատարելուն նպաստած է, այն է՝ այդ ընկերութեան տրամադրուած ընդերք օգտակար հանածոներու շահագործման նպատակով ուսումնասիրութեան յա-

տուկ իրաւասութիւններով ընկերութեան 100 տոկոս բաժնեմասը Հայաստանի մէջ արտասահմանեան ընկերութեան վաճառելու գործարքին չխոչընդոտելու համար, 2008 թուականի Փետրուարին եւ Մայիսին Սամուէլ Մայրապետեանի օժանդակութեամբ անկէ ստացած է առանձնապէս խոշոր չափերով՝ 927 միլիոն դրամին համարժէք 3 միլիոն տոլար կաշառք:

Մէլրան Օհանեանին մեղադրանք առաջադրուած է, որ 2008-ին հանդիսանալով պաշտպանութեան նախարարութեան Զինուած ուժերու գլխաւոր շտապի պետը, այլ անձերու հետ յանցակցութեամբ, տապալած է սահմանադրական կարգը:

Եւրոպի իրաւաբանութիւնը մեղադրանք առաջադրուած է, որ 2008-ին հանդիսանալով պաշտպանութեան նախարարի տեղակալը՝ Երեւանի կայազօրի պետը, այլ անձերու հետ յանցակցութեամբ, տապալած է սահմանադրական կարգը:

Արմէն Գէորգեանին մեղադրանք առաջադրուած է, որ մինչեւ 2008 թուականի 21 Ապրիլը զբաղեցնելով Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի եւ Անվտանգութեան խորհուրդի քարտուղարի պաշտօնները օժտանալով է նախարար Ռոպերթ Քոչարեանին՝ տապալելու սահմանադրական կարգը:

# ԼՈՒՐԵՐ

## Պոլսոյ Հայոց Նոր Պատրիարքի Ընտրութիւնը Ուրի Կազմակերպէ Արամ Արք. Աթշեան

Պոլսոյ Հայոց պատրիարքարանի Հոգեւոր խորհուրդը որոշում կայացուցած է նոր պատրիարքի ընտրութեան երթի պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթշեանի ղեկավարութեամբ:

Պատրիարք Մեսրոպ Մուսաֆեանի մահուան առիթով յայտարարուած 40-օրեայ սուգէն ետք նախօրէին գումարուած առաջին ժողովի ընթացքին քուէարկութեան դրուած է հետեւեալ հարցը՝ նոր պատրիարքի ընտրութեան գործընթացը համակարգել փոխանորդի? միջոցով, թէ՞ անհրաժեշտ է տեղապահ ընտրել: Եկեղեցական կանոնադրութեան եւ աւանդութիւններու համաձայն՝ պատրիարքի վախճանէն ետք տեղապահ կ'ընտրուի, որն ալ կը ղեկավարէ պատրիարքարանը մինչեւ նոր առաջնորդի ընտրութիւնը: Սակայն 2010 թուականէն ի վեր պատրիարքական փոխանորդի պաշտօնը զբաղեցնող Արամ Աթշեանը օրերս յայտարարած էր, թէ դէմ է տեղապահի ընտրութեան եւ ինքը՝ որպէս փոխանորդ, կը պատրաստուի համակարգել պատրիարքական գալիք ընտրութիւնները:

Ժողովի ժամանակ փակ գաղտնի քուէարկութեան արդիւնքով Հոգեւոր խորհուրդի անդամներէն 5-ը կողմ քուէարկած են գործընթացը պատրիարքական փոխանորդի միջոցով շարունակելու օգտին, 3 անդամ կողմ արտայայտուած է տեղապահ ընտրելու տարբերակին, եւս մէկը ձեռնպահ մնացած է: Այսպիսով, որոշում ընդունուած է Արամ արքեպիսկոպոս Աթշեանի եւ կրօնական ժողովի ընդհանուր ստորագրութեամբ յառաջիկայ օրերուն ղեկնում ներկայացնել իսթանպուլի նահանգապետարան Պոլ-



Պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթշեան

սոյ Հայոց 85-րդ պատրիարքի ընտրութեան ժամանակացոյցը պետական մարմիններու հետ համաձայնեցնելու համար:

Նախօրէին կայացած ժողովէն առաջ պոլսահայ իրաւաբաններ Սեդրակ Տաւութհանը եւ Սեպուհ Ասլանկիլը «Ակօս» պարբերականի հետ գրոցի ժամանակ ընդգծած են, որ եկեղեցական աւանդութիւններու համաձայն՝ նոր պատրիարքի ընտրութեան գործընթացը պէտք է գլխաւորէ պատրիարքական տեղապահը: Աւելի վաղ նման կարծիք յայտնած էր նաեւ պատրիարքարանի կրօնական ժողովի ատենապետ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը՝ յայտարարելով, որ կը պատրաստուի առաջադրել իր թեկնածութիւնը տեղապահի պաշտօնին:

Երկարատեւ ու ծանր հիւանդութենէ ետք Պոլսոյ Հայոց 84-րդ պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մուսաֆեանը վախճանած էր այս տարուան Մարտի 8-ին՝ 62 տարեկան հասակին:

## Ֆրանսայի Վարչապետ. Այն, որ Տեղի Ունեցածը Ցեղասպանութիւն է, Ապացուցուած է Փաստերով

«Ֆրանսան թոյլ չի տար իր վրայ ազդեցութիւն գործել ճնշման ու սուտերու միջոցով», - նախօրէին Փարիզի մէջ Հայոց ցեղասպանութեան յիշատակի միջոցաւման ժամանակ յայտարարած է Ֆրանսայի վարչապետ էտուարտ Ֆիլիփը՝ հակադարձելով պաշտօնական Անգարայի քննադատութեան Ապրիլ 24-ը Հայոց ցեղասպանութեան յիշատակի ազգային օր հռչակելու՝ Ֆրանսայի նախագահի որոշման առնչութեամբ:

«Ֆրանսերեսը» տեղեկացուցած է, որ Ֆրանսայի մէջ առաջին անգամ պաշտօնապէս նշուած է Հայոց ցեղասպանութեան յիշատակի ազգային օրը: Արարողութեան ժամանակ վարչապետ Ֆիլիփը ծաղիկներ դրած է Կոմիտաս վարդապետի յուշարձանին:

Իր խօսքին մէջ Ֆրանսայի վարչապետը նշած է, որ 1915 թուականի Ապրիլ 24-ին հայ մտաւորականներու աքսորով մեկնարկած զանգուածային տեղահանութեան հետեւանքով Անատոլիայի ճանապարհները վերածուած էին մահուան երթուղիներու, եւ ընդգծած է. - «Թուրքիոյ կողմէ հայերու զանգուածային կոտորածները դարձան 20-րդ դարու միւս ցեղասպանութիւններու նախագուշակը: Այն, որ տեղի ունեցածը ցեղասպանութիւն է, ապացուց-



Ֆրանսայի վարչապետ Էտուարտ Ֆիլիփ

ուած է փաստերով, եւ շատոնց արձանագրուած է պատմաբաններու կողմէ: Այդ սարսափը վերջիչելը չի նշանակեր համակերպուիլ անոր հետ, այլ՝ դասեր քաղել ու աշխատիլ աւելի լաւ աշխարհ կառուցելու համար: Սարսափին առերեսուիլը արդարութեան հասնելու նախապայման է»:

Պաշտօնական Անգարան իր հերթին Ֆրանսային առերեսման կոչերը բրած է: Նախագահ Էրտողանը, յիշատակելով Ռուստայի եւ Ալժիրի կոտորածները, յայտարարած էր, թէ Ֆրանսան չի կրնար իրենց դասեր տալ այս հարցի

## Հայաստանի Ռազմական Ծախսերը 2018-ին Աճած Են 33 Տոկոսով



Հայաստանի ռազմական ծախսերը 2018 թուականին աճած են 33 տոկոսով՝ հասնելով 609 միլիոն տոլարի, կը հաղորդէ Սթոքհոլմի մէջ գործող Միջազգային խաղաղութեան հետազոտութիւններու հիմնարկը (SIPRI):

Հիմնարկի տուեալներով՝ տոկոսային յարաբերակցութեամբ ռազմական ծախսերու ամենամեծ աճ արձանագրած երկիրներու շարքին են նաեւ Պոնիա-Հերցեգովինան՝ 26 տոկոս, Պուկարիան՝ 23

տոկոս, Ուքրանիան՝ 21 տոկոս, Ռումանիան՝ 18 տոկոս եւ Ղազախստանը՝ 16 տոկոս:

Ուքրանիայի եւ Կեդրոնական ու Արեւելեան Եւրոպայի այլ երկիրներու մէջ ռազմական ծախսերը կտրուկ աճած են, որպէս արձագանգ Ռուսաստանէն ենթադրեալ սպառնալիքներուն, նշած է SIPRI-ն: Ուքրանիոյ ռազմական ծախսերը, մասնաւորապէս, անցեալ տարի հասած են 4,8 միլիարտ տոլարի:

## Ատրպէյճանը Բողոքի Գիր Յղած է Ուրուկուայի Կառավարութեան Մասիս Մայիլեանի Այցի Կապակցութեամբ



Մայիլեան ելոյթ կ'ունենայ Սոնթվիտտի »Արմենիա« հրապարակին վրայ Ապրիլ 24-ին տեղի ունեցած միջոցառման ընթացքին

Պաշտօնական Պաքուն բողոքի գիր յղած է Ուրուկուայի կառավարութեան՝ այդ երկրին մէջ Լեռնային Ղարաբաղի պաշտօնական պատուիրակութիւնը հիւրընկալելու կապակցութեամբ, կը փոխանցէ «Ինթերֆաքս» լրատուական գործակալութեան ատրպէյճանական ծառայութիւնը:

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի ծառայութիւնը յայտնած է, որ յառաջիկային Ուրուկուայի մէջ Ատրպէյճանի դեսպանը մտադիր է հարցը քննարկել կառավարութեան ներկայացուցիչներուն հետ:

Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեանի գլխաւորած պատուիրակութիւնը Ուրուկուայ մեկնած է շաբաթական հարցի եւ ահաբեկչութեան դէմ պայքարի թեմաներով Թուրքիոյ մարդու իրա-

րակութիւնը Ուրուկուայ մեկնած է շաբաթական հարցի եւ ահաբեկչութեան հարցումներու՝ նախարար Մայիլեանը հանդիպած է Ուրուկուայի փոխնախագահ, խորհրդարանի նախագահ Լուսիա Թոփոլանսքիի հետ, հիւրընկալուած է երկրի նախկին նախագահ, իշխող քաղաքական դաշինքի առաջնորդներէն՝ Խոսէ Մուխիբայի տան մէջ, քննարկումներ ունեցած է Ուրուկուայի իրաւապաշտպան շրջանակներու հետ: Արցախի արտաքին գործոց նախարարը նաեւ ելոյթ ունեցած է Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին նուիրուած մայրաքաղաք Մոնթէվիտոյի մէջ կազմակերպուած միջոցառման ժամանակ:

վերաբերել: «Հայկական հարցի եւ ահաբեկչութեան դէմ պայքարի թեմաներով Թուրքիոյ մարդու իրա-

ւունքներու եւ ժողովրդավարութեան դասեր տուողները բոլորն ալ արիւնոտ անցեալ ունին», - ըսած էր Էրտողան:

# Կարօ Փայլան Թուրքիոյ Պետական Արխիւին Սէջ Հայոց Յեղասպանութեան Մասին Փաստաթուղթերու Վերաբերեալ Բացատրութիւն Պահանջած է Էրտողանի Օգնականն

Թուրքիոյ Հանրապետութեան խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը Պետական արխիւին մէջ Հայոց ցեղասպանութեան մասին փաստաթուղթերու առկայութեան վերաբերեալ հարցում ուղղած է նախագահ Ռեճէպ Էրտողանի օգնական Ֆուատ Օքթային: «Արմէնբրես»-ը հարցումը ներկայացուցած է ամբողջութեամբ:

«Թուրքիոյ Հանրապետութեան նախագահի օգնական Ֆուատ Օքթային յղած ենք հետեւեալ հարցումը՝ պատասխանի պահանջով. Հանրապետութեան նախագահ Էրտողանի՝ Հայոց Մեծ Եղեռնի 104-րդ տարելիցի առթիւ 24 Ապրիլ 2019-ի յայտարարութեան մէջ նշուած է. «Մեր արխիւներու դռները բաց են բոլոր անոնց առջեւ, որոնց նպատակն է բացատրել ճշմարտութիւնը: Մենք գաղտնիք չունինք»: Այսպիսով, շեշտելով, թէ բոլոր պետական արխիւները բաց են բոլոր ուսումնասիրողներուն առջեւ:

Ուստի, կը հարցնենք՝ հայ ժողովուրդի նկատմամբ գործած մարդկային յանցագործութիւններու ոճրագործները դատելու նպատակով 1919-1922 թուականներուն գործած Պատերազմական ատեանի ատենագրութիւններու ճակատագիրը: Ուսումնասիրողները կը յայտնեն, թէ ի՞նչ է ատենագրութիւնները հասանելի չեն իրենց: Պատերազմական ատեանի ատենագրութիւնները պետական արխիւին մէջ չեն գտնուիր: Յիշեալ ատենագրութիւնները առաջին անգամ ե՞րբ արխիւ մուտքագրուած են: Ատենագրութիւններու տուեալները վերջին անգամ ե՞րբ եւ ո՞ր արխիւի գրացուցակի վրայ էին: Ո՞ւր են եւ ո՞ր արխիւի մէջ պահուած են այս ատենագրութիւնները, եթէ իրականութեան չեն համապատասխաներ բնագրերու բացակայութեան կամ անոնց անհասանելիութեան վերաբերեալ պնդումները: Ուսումնասիրողները, որոնք «կ'ուզեն բացատրել ճշմարտութիւնը», ի՞նչ միջոցով պէտք է կարողանան հասնիլ այդ ատենագրութիւններուն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Պատերազմական ատեանի ատենագրութիւնները պետական արխիւին մէջ չեն գտնուիր: Յիշեալ ատենագրութիւնները առաջին անգամ ե՞րբ արխիւ մուտքագրուած են: Ատենագրութիւններու տուեալները վերջին անգամ ե՞րբ եւ ո՞ր արխիւի գրացուցակի վրայ էին: Ո՞ւր են եւ ո՞ր արխիւի մէջ պահուած են այս ատենագրութիւնները, եթէ իրականութեան չեն համապատասխաներ բնագրերու բացակայութեան կամ անոնց անհասանելիութեան վերաբերեալ պնդումները: Ուսումնասիրողները, որոնք «կ'ուզեն բացատրել ճշմարտութիւնը», ի՞նչ միջոցով պէտք է կարողանան հասնիլ այդ ատենագրութիւններուն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Պատերազմական ատեանի ատենագրութիւնները պետական արխիւին մէջ չեն գտնուիր: Յիշեալ ատենագրութիւնները առաջին անգամ ե՞րբ արխիւ մուտքագրուած են: Ատենագրութիւններու տուեալները վերջին անգամ ե՞րբ եւ ո՞ր արխիւի գրացուցակի վրայ էին: Ո՞ւր են եւ ո՞ր արխիւի մէջ պահուած են այս ատենագրութիւնները, եթէ իրականութեան չեն համապատասխաներ բնագրերու բացակայութեան կամ անոնց անհասանելիութեան վերաբերեալ պնդումները: Ուսումնասիրողները, որոնք «կ'ուզեն բացատրել ճշմարտութիւնը», ի՞նչ միջոցով պէտք է կարողանան հասնիլ այդ ատենագրութիւններուն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Պատերազմական ատեանի ատենագրութիւնները պետական արխիւին մէջ չեն գտնուիր: Յիշեալ ատենագրութիւնները առաջին անգամ ե՞րբ արխիւ մուտքագրուած են: Ատենագրութիւններու տուեալները վերջին անգամ ե՞րբ եւ ո՞ր արխիւի գրացուցակի վրայ էին: Ո՞ւր են եւ ո՞ր արխիւի մէջ պահուած են այս ատենագրութիւնները, եթէ իրականութեան չեն համապատասխաներ բնագրերու բացակայութեան կամ անոնց անհասանելիութեան վերաբերեալ պնդումները: Ուսումնասիրողները, որոնք «կ'ուզեն բացատրել ճշմարտութիւնը», ի՞նչ միջոցով պէտք է կարողանան հասնիլ այդ ատենագրութիւններուն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

## Կարօ Փայլանի Կոչը Թուրքիոյ Խորհրդարանին

Աւելի վաղ Կարօ Փայլանը Թուրքիոյ խորհրդարանին կոչ ըրած է Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ խորհրդարանական քննու-



թիւն իրականացնելու:

«24 Ապրիլ 1915-ին, Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլսոյ բնակիչ քաղաքագէտներ, գրողներ, բանաստեղծներ, լրագրողներ, մանկավարժներ, գիտնականներ, բանասէրներ եւ բազմաթիւ հայ մտաւորականներ ձերբակալուեցան: Անոնք նախ աքսորուեցան Այազ ու Չանղըրը եւ ապա մեծամասնութիւնը սպանուեցաւ: Թէեւ 1915-ի կորուստները անկարելի է վերադարձնել, սակայն միասնաբար ապրելու տեսակէտէ արժէքաւոր է հասարակաց իշխողութենէ ներս ստեղծուած ցաւերը ընդունիլ եւ աշխատիլ զիրար առողջացնելու ուղղութեամբ:

Խորհրդարանը պէտք է վերականգնէ իրաւունքները ու պէտք է ապրեցնէ իշխատակը այն մտաւորականներուն, որոնք կ'աշխատէին յանուն օսմանեան եւ հայ ժողովուրդներու լուսաւորութեան, ոտքի կը պահէին կրթական հաստատութիւնները, կը գրէին, կ'արտադրէին, կը մտածէին եւ որոնք սակայն սպանուեցան այս հողերուն վրայ:

24 ապրիլ 1915-ը ողջ աշխարհի կողմէ ընդունուած է որպէս Հայոց ցեղասպանութեան սկզբնաւորութեան թուականը:

Հայոց ցեղասպանութիւնը եղած է աշխարհի տասնեակ խորհրդարաններու քննարկման նիւթը, սակայն երբեք չէ քննարկուած Թուրքիոյ խորհրդարանին ներս: Մինչդեռ խորհրդարանը, ուր պէտք է խօսուի մեծ աղէտին մասին, աղէտին պատահած երկրին խորհրդարանն է: Այսինքն՝ Թուրքիոյ խորհրդարանը:

Աշխարհափիւռ Թուրքիացի

հայեր 104 տարի է ի վեր արդարութիւն կը պահանջեն: Արդարութիւնը կարելի է վերականգնել միայն Թուրքիոյ ժողովուրդներու խղճին մէջ ու Թուրքիոյ խորհրդարանին ներս: Խորհրդարանը, որ պէտք է քննարկէ հայ ժողովուրդը պատուհասած մեծ աղէտը, նախեաւ պէտք է ըլլայ Թուրքիոյ խորհրդարանը: Այս ուղղութեամբ կը պահանջենք խորհրդարանական քննութիւն մը», - ըսուած է յայտարարութեան մէջ:

## Երեւանի Սէջ Կայացաւ

Շարունակուած է 1-էն

ըսաւ ան, ուժանիւթակիրներու խտրական գիներու հարցի վրայ՝ ըստ հուլիանի ակնարկելով, որ միութեան անդամ երկիրները տարբեր գիներով կը ստանան ուժանիւթակիրները՝ կազմ, նաւթ, նաւթամթերքը, եւ այդ իր ազդեցութիւնը կ'ունենայ տարբեր երկիրներու արտադրանքին վրայ:

«Մենք ձգտում ենք ԵԱՏՄ-ում Հայաստանի առաւելագոյն արդիւնաւէտ մասնակցութեանը՝ միեւնոյն ժամանակ ջանքեր գործադրելով համագործակցութեան մեխանիզմների կատարելագործման եւ ընդլուծման տարածքի արդիւնաւէտ գործունէութեան համար», - յայտարարած է ՀՀ վարչապետը:

«Ուրախ եմ արձանագրել, որ նկատուած է Հայաստանի եւ միութեան անդամ երկրների միջեւ ապրանքաշրջանառութեան աճ: Եւրասիական տնտեսական միութեան երկրների տեսակարար կշիռը Հայաստանի արտահանման մէջ 2018 թուականին հասել է 28,5 տոկոսի: Արտահանումը դէպի միութեան անդամ երկրներ աճել է 20 տոկոսով, իսկ ընդհանուր ապրանքաշրջանառութիւնը՝ 11 տոկոսով», - նշած է Փաշինեանը՝ վստահեցնելով. - «Հայաստանն իր նախագահութեան ընթացքում կը գործադրի բոլոր ջանքերը՝ ընդլուծման գրական ընթացքի ամրապնդման եւ համագործակցութեան նոր մեխանիզմներու եւ ճանապարհներու որոնման հարցում»:

«Եւրասիական տնտեսական միութեան կարելորագոյն ընդլուծման ուղղութիւններէ կազմ, նաւթի եւ նաւթամթերքի ընդհանուր շուկաների ստեղծումը եւ ընդհանուր էլեկտրական ուժանիւթի շուկայի աստիճանաբար ձեւաւորումը: Մենք անհրաժեշտ ենք համարում աշխուժացնել այն ջանքերը, որոնք ուղղուած են ոչ խտրական հիմքի վրայ ուժանիւթի միջոցներով գնադրացման զգալուն հարցի արագ լուծման եւ դրանց տարանցման միութեան անդամ պետութիւնների տարածքներով՝ այդ թւում հաշուի առնելով տարանցիկ բաղադրիչները», - յայտարարած է Հայաստանի կառավարութեան ղեկավարը:

## ԱՄՆ Քոնկրէսական Ֆրենք Փալոնէն Էրտողանի Ելոյթը Անուանած է «Զգուելի»

ԱՄՆ քոնկրէսական Ֆրենք Փալոնէն Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Էրտողանի խօսքերը ցեղասպանութեան մասին անուանած է «զգուելի»:

«Ատելութեամբ լեցուած այս խօսքը, որ Էրտողանը ըսաւ Հայոց ցեղասպանութեան յիշատակման օրը, պատմական փաստերու զգուելի ժխտում է», - գրած է Փալոնէն ու տարածած նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի արձագանքը Էրտողանին, որուն մէջ նշած էր, որ այն ծայրայեղ ատելութեան խօսք է անձամբ Էրտողանի կողմէ ու կոչ ըրած միջազգային հանրութեանը՝ չլռել:

Փալոնէն նաեւ գրած է, որ կանգնած է Նիկոլ Փաշինեանի ու հայերու հետ ամենուր՝ դատապարտելու այս դաժան մենատէրի կողմէ նոր «անկումը»:

Յիշեցնենք, որ Ապրիլ 24-ին Էրտողանը Օսմանեան կայսրութեան բնակչութեան անուանած էր «հայ հրոսակներ ու անոնց աջակիցներ» ու անոնց տեղահանումները համարած այդ ժամանակ «ամենատրամաբանական վարքագիծ»:

Քերը, որոնք ուղղուած են ոչ խտրական հիմքի վրայ ուժանիւթի միջոցներով գնադրացման զգալուն հարցի արագ լուծման եւ դրանց տարանցման միութեան անդամ պետութիւնների տարածքներով՝ այդ թւում հաշուի առնելով տարանցիկ բաղադրիչները», - յայտարարած է Հայաստանի կառավարութեան ղեկավարը:

Խօսած է նաեւ Պելաուսիոյ վարչապետը, որ ԵԱՏՄ ձեռքբերումները ներկայացնելէ բացի, նաեւ դարձեալ ուշագրաւ յայտարարութիւն ըրած է՝ ըսելով, թէ վերջին շրջանին խոչընդոտները միութեան մէջ կը շատնան, եւ անոնք խնդիր կ'առաջացնեն ընդլուծման հետագայ խորացման համար:

Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը յայտարարեց, որ Եւրասիական տնտեսական միութիւնը կարելի է կայացած միութիւն համարել, եւ աշխատանքները խնդիրներու յաղթահարման, խնդիրներու լուծման եւ ինտեգրացիայի խորացման ուղղութեամբ կը շարունակուին:

Նիստի արդիւնքներով ստորագրուած խումբ մը փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին ԵԱՏՄ շրջանակին ներս արդիւնաբերական համատեղ գործունէութեան, ելեկտրոնային թուային ստորագրութիւններու օգտագործման, ԵԱՏՄ ներքին շուկայի արգելքներու վերացման, ապրանքներու ներկրման եւ արտահանման համընդհանուր մօտեցումներու կիրառման, ԵԱՏՄ-ի մէջ առեւտուրի թուային համակարգի զարգացման, տնտեսական գործունէութեան կարգաւորման համակարգին մէջ «մէկ պատուհանի» սկզբունքի ներդրման:

Եւրասիական միջկառավարական խորհուրդի յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Օգոստոսին Ղրղըզստանի Չոլփոն-Աթա քաղաքին մէջ:

## Հայաստան Կոչ Կ'ընէ

Շարունակուած է 1-էն

կանխարգիւման ուղղութեամբ: Յեղասպանութեան զոհերու յիշատակի ոգեկոչումը եւ արժանապատուութեան յարգումը ցեղասպանութեան կանխարգիւման ուղղուած ամենակարեւոր գործիքներն են», - նշուած է յայտարարութեան մէջ:

Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Էրտողանի հանդէս եկաւ նաեւ երկրորդ ելոյթով, եւ իշխող «Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան» մէկ ժողովի ժամանակ ըսաւ. - «Հայերու տեղահանութիւնը ոչ ցեղասպանութիւն էր, ոչ ալ մեծ աղէտ:

Անիկա սոսկ ցաւալի իրադարձութիւն մըն էր, որ տեղի ունեցած է մէկ դար առաջ շատ ծանր պայմաններուն մէջ»:

«Թուրքիան մեղադրողներուն յիշեցնենք, որ անոնք պատասխանատու են Առաջինին եւ Երկրորդը համաշխարհային պատերազմներուն զոհուած 70 միլիոն մարդոց համար: Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը պէտք է լաւ գիտնայ ատիկա: Պարոն Մաքրոն, Ֆրանսայի մէջ ապրող շուրջ 700 հազար հայերուն ուղերձ յղելը բնաւ պիտի չփրկէ քեզ: Քաղաքականութեան մէջ նախ սորվիր ազնիւ ըլլալ», - յորդորած է Թուրքիոյ նախագահը:

### Հայաստանի Գիտնականները Պարզած են Հայոց Ցեղասպանութեան Հետեւանքով Հայ Ժողովուրդի Կրած Վնասներու Չափը



Վերջին տարիներուն հայաստանցի պատմաբանները, քաղաքական ու հասարակական շրջանակները աշխույժ պայքար կը մղէին Օսմանեան Թուրքիոյ կողմէ իրականացուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացը դէպի իրաւաքաղաքական դաշտ տեղափոխելու ուղղութեամբ: Շատերը կը պնդեն՝ անցած է ցեղասպանութեան ճանաչման փուլը, եկած է հատուցում պահանջելու ու պատճառուած հետեւանքները վերացնելու ժամանակը:

Ցեղասպանութեան հետեւանքներու, վնասներու, կրած կորուստներու մասին տարբեր թիւեր, տեսակէտներ կան: Անոնք ի մի բերելու ու ամբողջական գնահատական տալու նպատակով Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիային մէջ ստեղծուած է միջգիտակարգային յանձնախումբ, որուն մէջ ներառուած են գիտնականներ ու մասնագէտներ պատմութեան, արեւելագիտութեան, արուեստի, երկրաբանութեան, հնագիտութեան եւ ազգագրութեան, բնագիտութեան եւ աստղաբանագիտութեան հիմնարկներէն՝ Ռուբէն Մելքոնեան, Արմէն Մարուքեան, Պաւել Աւետիսեան, Ռուբէն Սաֆրաստեան, Արարատ Աղասեան, Դաւիթ Քերթմէնճեան եւ այլք:

«Յանձնախումբը կարողացել է մեր ունեցած կորուստները՝ սկսած տարած քայլինից մինչեւ եկեղեցիներ, մշակութային արժէքներ, հաւաքագրել: Արուեստագէտներն աշխատել են իրենց մասով, պատմաբանները՝ իրենց, նաեւ երկրաբաններ ու բնագէտներ կան խմբում: Վերջինները, օրինակ, հանքային հանածոների մասով ահռելի գործ են արել: Արեւմտեան Հայաստանի տարածքում հսկայական հանածոներ կան, որոնք անցած 100 ու աւելի տարիների ընթացքում շահագործուել են, դրանց շահութիւնները աստղաբաշխական գումարներ են կազմում: Խմբում ընդգրկուած բոլոր մասնագէտներն իրենց հնարաւորութեան սահմաններում հաւաքել են մեր ունեցած կորուստի

հանրագումարը, եւ 600-700 էջանոց ծանրակշիւ մի աշխատութիւն առաջիկայ մի քանի ամիսների ընթացքում լոյս կը տեսնի», - Panorama.am-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է ԳԱԱ պատմութեան հիմնարկի տնօրէն Աշոտ Մելքոնեանը:

Գիտնականը կը կարծէ, որ աշխատութեան հրատարակումէն ետք պիտի ըլլան գործնական քայլեր հատուցման խնդիրը առաջ մղելու համար:

«Ժամանակին Լեւոն Վարդան անունով գործիչ կար: Նա սկսել էր գրել հայկական կորուստների մասին, այսպէս կոչուած լքեալ գոյքի վերաբերեալ, երբ Թուրքերը օրէնքներ էին գրել, որպէսզի պետականացնէին հայերից յափշտակուած գոյքը: Հիմա մենք գիտական մակարդակով դա դնում ենք ընթացքի մէջ, կարծում եմ՝ կը գայ ժամանակը, որ պետական մարմինները մեզ սատար կը կանգնեն, եւ քաղաքական մակարդակով եւս այդ հարցն առաջ կը մղեն», - մանրամասնած է գիտնականը:

Մելքոնեանը չի շեղուցած է, որ մինչեւ 1921 թուականը տարբեր թիւեր շրջանառուած են, խօսուած է 18 միլիոն ֆրանքի մասին, որ ըստ գիտնականի, այսօր մի քանի հարիւր միլիաո ամերիկեան տոլար կը կազմէ:

«Բայց այդ նախկին ու ներկայ հաշուարկները համեմատելի չեն միմեանց հետ: Միայն կ'ասեմ հետեւեալը, մեր նիւթական կորուստները կազմել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանեան կայսրութեան կրած վնասների կրկնակին, որոշ հաշուարկների համաձայն, խօսքն առնուազն կէս թրիլիոն տոլարի մասին է: Սա էլ յարաբերական թիւ է, միայն շօշափելի նիւթական կորուստների մասին է խօսքը, դրանում ներառուած չեն հոգեւոր արժէքները՝ երաժշտութիւն, ձեռագրեր, եկեղեցիներ, որոնք ֆինանսական առումով անկարելի է հաշուել: Էլ չեմ ասում ամենակարեւորը՝ հայրենիքը, որը գին, ար-

### Նիւ Եորքի «Թայմզ Սքուէրին» Մէջ Տեղի Ունեցած Է Միջոցառում Հայոց Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակին



Ապրիլ 28-ին Նիւ Եորքի «Թայմզ Սքուէրի» մէջ տեղի ունեցած է ցեղասպանութեան յիշատակի օրուան նուիրուած միջոցառում:

Միջոցառման ներկայ եղած են ամերիկացի քաղաքական գործիչներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ, կը տեղեկացնէ «Ամերիկայի ձայնը»:

Իր խօսքին մէջ ծերակուտական Չաք Շումէրը դատապարտած է նախկին եւ ներկայ վարչակազմերը այն բանի համար, որ անոնք չեն ճանչցած Հայոց ցեղասպանութիւնը եւ իրենց գործողութիւնները կը բացատրեն քաղաքականութեամբ: «Ես անոնց մէկ պատասխան ունիմ, երբ խօսքը կը վերաբերի 1,5

միլիոն դաժանաբար սպանուած մարդոց, քաղաքականութիւնը պէտք չէ դեր ունենայ», - ըսած է ան:

Ծերակուտական Ռոպերթ Մենէնտեսը նշած է. «Մենք երբեք չենք մոռանար Հայոց ցեղասպանութիւնը»:

Քոնկրէսական Ֆրենք Փալոնէն շնորհակալութիւն յայտնած է հայկական ծագում ունեցող ամերիկացիներուն Հայկական հարցի կոմիտէի ջանքերուն աջակցելու համար:

Այս տարի միջոցառման ժամանակ ելոյթ ունեցած է երգիչ էլի Պէրպէրեանը, որ կատարած է Շարլ Ագնաուերի «Ils Sont Tombes» երգը եւ «Տլէ եամանը»:

Ժէք չունի», - նշած է ԳԱԱ պատմութեան հիմնարկի տնօրէնը:

Աշխատութիւնը պիտի տրամադրուի նաեւ իրաւաբաններուն, որպէսզի անոնք կորուստներու մասին հաւաքուած փաստական տուեալները վերածեն իրաւական նիւ-

թի՝ Հաագայի միջազգային դատարան մտնելու համար:

Գիտնականներու ուսումնասիրութիւններու համար հիմք հանդիսացած են քանի մը տասնեակ երկիրներու, նաեւ Հայաստանի արխիւային նիւթերը, քարտէզները:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
(626) 797-7680

Organized by the Homenmen Ladies Auxiliary

# Mothers Day BRUNCH

Saturday, May 4, 2019  
At 11:00 am - 3:00 pm

**BABYLON MEDITERRANEAN RESTAURANT**  
162 N. Sierra Madre Blvd., Pasadena

Donation: \$60

For tickets please call  
**Karine (818) 324-0574**

### «Լարք»ի Գրական-Երաժշտական Երեկոն Նուիրուած Մեծ Եղեռնի Նահատակներուն



#### Գ. ՄՈՒՆՅԵԱՆ

Հայոց ցեղասպանութեան 104րդ տարելիցին առթիւ կազմակերպուած համագաղութային տարբեր միջոցառումներու առընթեր՝ տեղի ունեցաւ նաեւ գեղարուեստական յիշարժան երեկոյ մը. Ուրբաթ, Ապրիլ 26ին, Կլենտէյլի Փրէսպիթերիըն եկեղեցւոյ մէջ:

Արդարեւ, անմահ Կոմիտասի ծննդեան 150-ամեակին եւ մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակի ծննդեան 95-ամեակին զուգարկապող սոյն ձեռնարկը՝ մասնաւորաբար նուիրուած էր Մեծ Եղեռնի նահատակներու յիշատակին «Եռաձայն Պատարագ» ընդհանուր խորագրի տակ:

Լարք երաժշտանոցի ուսանողներու կողմէ ձեռնագանգերու կատարմամբ Կոմիտասի «Սուրբ, Սուրբ» եւ «Քրիստոս ի Մէջ Մեր Յայտնեցաւ» նուագէն ետք՝ բացման խօսքով հանդէս եկաւ Լարքի փոխ-տնօրէնուհի եւ սոյն միջոցառման համակարգիչ Թագուհի Արզումանեան: Ան ջերմօրէն ողջունեց ներկայ հասարակութիւնը եւ ապա ոգեկոչեց մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու անմեռ յիշատակը:

Այնուհետեւ շնորհալի արուեստագիտուհի Թագուհի Արզումանեան իւրապատուկ մեկնաբանութեամբ եւ ապրումով արտասանեց Պարոյր Սեւակի «Անլուերի Զանգակատուն»էն գողտրիկ հատուածներ ուր Կոմիտասի մասին կ'ըսէ.

«Դ՛ո՛ւ, վարդապետ

Դու ամենայն հայոց երգի վեհափառն ես,

Դու մեր երգի Մերոպ Մաշտոց, գիրն ու տառն ես Հայոց երգի»:

Արդարեւ, «Եռաձայն Պատարագ»ի մէջ Պարոյր Սեւակ մեր պատմութեան ողբերգական թուականը սեւով ներկելէ ետք՝ դարձեալ հաւատի պատգամ կը ձօնէ ժողովուրդի վերածնունդին եւ անոր ստեղծագործ ներկային մէջ, կը գուշակէ պայծառ ապագան:

Յայտագրի գեղարուեստական բաժնին մէջ ելոյթ ունեցաւ «Տաւիղ» պարի համույթը (գեղարուեստական ղեկավար՝ Լ. Խաչատրեան): Յատկանշական երեւոյթ էր, դեռատի պարախումբի անդամներու գունագեղ տարագներով, համաչափ ու ներդաշնակ կատարումները, հանդիսատեսին պարգեւեցին անբաւ հաճոյք իրենց «Տէ՛ Եաման», «Էրզրումի Շորոր» եւ «Քոչարի» պարերով, որով կարծէք թարմ շունչ կը բերէին հայոց լեռնաշխարհէն ներկաներուն ներշնչել տալով սո-

կալու եւ հայօրէն գոյատեւելու հաստատակամութիւնը:

Ուշագրաւ երեւոյթ մըն էր նաեւ «Ծիածան» մանկապատանեկան երեք տարբեր երգչախումբերու մեծաթիւ անդամներով ելոյթները: Արդարեւ անոնք (գեղար-

Շար.ը էջ 19

### Հայաստան Արցախ Ֆոնտը Յունուարէն Ապրիլ 2019-ի Միջեւ \$4.5 Միլիոնի Նպաստ Հայթայթած է Հայաստանին ու Արցախին

Յունուարէն Ապրիլ 2019-ի միջեւ, Հայաստան Արցախ Ֆոնտը \$4.5 միլիոն արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին:

Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը \$4.1 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք եւ այլ մարդասիրական պիտոյքներ ապահոված է AmeriCares (\$3.7 միլիոն) եւ Direct Relief (\$445,000) կազմակերպութիւններէն:

Մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Project Agape (\$163,000), Հաուըրտ Գարակէօքեանի Յիշատակի Ընկերութիւնը (\$77,000), Հայաստանի Ակնաբուժական Ծրագիրը (\$67,000), Բժ. Ալյերթ Ֆիլիպս (\$12,300), եւ Բժ. Սթիվըն Քաշեան (\$9,000):

Այս ժամանակաշրջանին նուիրուած դեղորայքն ու բժշկա-

կան պիտոյքները առաքուած են Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան, Արցախի Առողջապահութեան Նախարարութեան, ՀԲԸՄ Քլոտիա Նազարեան Սուրիահայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին՝ Երեւան, Արաբիլի Մանուկներու Միացեալ Հիմնարկին, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, Հայաստանի Օգնութեան Ֆոնտին, Մանկաբարձային, Նորածնաբանական, եւ Կնաբանական Կեդրոնին,

Շար.ը էջ 19





# COMEDY NIGHT

Կազմակերպութեամբ՝  
 «Մ.Մ.-ի Տիկնանց Վարչութեան  
 ի նպատակով՝  
 ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ  
 ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Երեկոն կը խանդավառէն՝  
**ՅԱՐՈՒԹ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ**  
 «Խրաբար՝ Տաղանդատու երգիչ  
**ԱՐԹԻԻՐ "MISTER X"**

Տեղի կ'ունենայ  
**ՇԱԲԱԹ, 1 ՅՈՒՆԻՍ, 2019**  
 Երեկոյեան ժամը 8:30-են սկսեալ  
 «ԿԲՄ-ի Կեդրոն»՝ 1060 N. Allen Ave., Pasadena, California

Տոմսերը ապահովկու համար դիմել  
 Կարինէին (626) 755-4773

Մուտք \$60 Նեաղայ ընթացիկ

### Կլենտելի DPSS-ի Մեջ Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչման Ձեռնարկ



#### ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅՄԱՆ

Ինչպէս մեր ընթերցողները գիտեն, Գալիֆորնիոյ նահանգը 58 Գաւառ (County) ունի: Անոնցմէ մին է Լոս Անճելոս Գաւառը, որ մօտ 11 միլիոն բնակչութիւն եւ 112 հազար պետական պաշտօնեաներ ունի, որոնց մօտ 8 առ հարիւրը հայեր են:

Լոս Անճելոս Գաւառը ունի 34 բաժանմունքներ եւ 200-է աւելի մարմինները, բնակչութեան գանձազան ծառայութեանց համար:

Այս բաժանմունքներէն մին է ընկերային ծառայութեանց բաժանմունքը (Department of Public and Social Services), որ կը զբաղի բնակչութեան առողջապահական եւ նիւթական որոշ նպաստներ հայթայիթելով:

Միայն DPSS ունի 31 կեդրոններ Լոս Անճելոսի Գաւառին մէջ, որոնցմէ մին է DPSS-ի Կլենտելի կեդրոնը: Այս կեդրոնին մէջ կը գործեն մօտ 380 պաշտօնեաներ, որոնց մէջ մեծ թիւ կը կազմեն հայերը:

Հինգշաբթի, Ապրիլ 18-ին, առաւօտեան ժամը 10-ին Կլենտելի DPSS կեդրոնի մէջ տեղի ունեցաւ մեր Սրբադասուած նահատակներու յիշատակի ոգեկոչման իրապէս փառաւոր եւ տպաւորիչ ձեռնարկ մը՝ գլխաւորութեամբ կեդրոնի պաշտօնեաներէն, ազգային ծանօթ գործիչներ Վահագն Աբգարեանի եւ ճորճ Մատոյեանի:

Պաշտօնեութեան հոծ բազմութիւն մը եկած էր, իրենց հայ պաշտօնակիցներուն ցաւակցութիւն եւ զօրակցութիւն յայտնելու:

Ամերիկեան Օրհներգէն եւ Հայաստանի Քայլերգէն ետք, շատ գեղեցիկ մատուցմամբ բացման խօսքը կատարեց երիտասարդ պաշտօնեաներէն Անի Նաշարեան:

Մասիս Մեարդեան եւ Սիմոն Սիմոնեան «Ատանա» երգի կատարումով խոովեցին ներկաներու հոգիները:

Ապա, հանդիսավարուհին ջերմ խօսքերով ներկայացուց օրուան գլխաւոր բանախօս Դոկտ. Քէյ Մուրատեանը: Արդարեւ, մեզի համար իսկապէս հաճելի յայտնութիւն մըն էր լսել համալսարանի այս շնորհաշատ դասախօսուհին ելոյթը: Դոկտ. Մուրատեան վերջերս գիրք մը հրատարակած էր

իր մօր մասին, այդ գիրքին միջոցաւ ան խօսեցաւ մեր ժողովուրդի ապրած դժոխսային սպանդի օրերու մասին:

Դոկտ. Մուրատեանի ելոյթը արժանացաւ հայ եւ օտար ներկաներուն ջերմ ու երկարատեւ ծափահարութեան:

Ապա, գոնկրեմմէն Ատամ Շիֆի խիստ շահեկան խօսք կարդաց իր գործակատարներէն՝ Մարի Յովակիմեան, որ հրապարակախօսի իր հմայիչ ելոյթով խորապէս գոհացրելու ներկաները:

Խօսք առաւ Կլենտելի քաղաքապետարանի անդամ, հեռատեսիլի կայաններու սեփականատէր Վրէժ Աղաճանեան:

Գնահատագիր մը յանձնուեցաւ եւ կարդացուեցաւ Լոս Անճելոսի Գաւառի վերահսկիչ Գաթրին Պարկրի կողմէ, որ յանձնուեցաւ DPSS-ի կեդրոնի տնօրէն Darrel Baker-ի:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ կը պատուէին DPSS-ի Կենտելի կեդրոնի ընհանուր տնօրէնը եւ անոր օգնականները:

Տնօրէն Darrel Baker խօսք առնելով, իր ցաւակցութիւնը յայտնեց եւ մաղթեց որ նման մարդկութեան սպառնացող ցեղասպանութիւններէ հեռու մնայ մարդկութիւնը:

Վերջաւորութեան, հիւրաբար ներկայ եղող արուեստագէտներ՝ Յասմիկ ձառահեան, Սուրէն Մինասեան, Մասիս Մեարդեան եւ Սիմոն Սիմոնեան «Երեւան դարձած իմ էրեքունի» խմբերգով եւ ներկաներու լիաթոք մասնակցութեամբ վերջ գտաւ այս իրապէս երկար ժամանակ ներկաներու մտքին եւ հոգիին յիշողութեան մէջ դրոշմուելիք ձեռնարկը:

Յիշենք թէ պաշտօնական այս բաժինէն ետք տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն մը մեր նահատակներու հոգիներուն համար:

Իսկ Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներու կողմէ անձնական հայկական արուեստի նմուշներ բերուած էին, որոնք ցուցադրուեցան ձեռնարկի ողջ տեւողութեան:

Քառասուներկու ցեղախումբերէ կազմուած Քենիան բազմալեզու երկիր է, անոր մայրենին կը հանդիսանայ սուահիլին, իսկ անգլերէնը՝ պաշտօնական, որովհետեւ երկիրը երկար ժամանակ մնացած է անգլիական գաղութատիրութեան տակ եւ միայն 1962 թուականին ստացած է իր անկախութիւնը: Այդ «պաշտօնական» լեզուն վերածուած է նաեւ «ուսուցիչի լեզու»-ի, ինչպէս որ իրենք կ'անուանեն, եւ դպրոցներուն մէջ կը գործածուի որպէս կրթական ծրագրի եւ ուսուցման լեզու... Այս իմաստով ալ չ'ուշանար մանկավարժներու մտահոգութիւնը, որ առկայ է այս օրերուն, թէ՛ մայրենի լեզուն երկրին մէջ կրնայ անյայտանալ յաջորդ յիսուն տարիներու ընթացքին: Կայ մտահոգութեան միւս՝ դրական երեսը.

«Ժողովուրդին մեծ համեմատութիւնը ուսեալ է,- ըսաւ Սամին:- Կառավարութիւնը կը քաջալերէ իր ժողովուրդը, որպէսզի կարելիութիւն ունենայ ուսանելու»:

Բայց երկիրը ունի իր տագնապները: Ճնշող տագնապը աղքատութիւնն է: «Ինչո՞ւ այսքան մարդ փողոցները կը քալեն», հարցուցի Սամիին՝ մեկնելով շատ պարզ դիտարկումէ մը:

«Որովհետեւ կարելիութիւն չունին հանրային փոխադրամիջոցներ գործածելու: Իրենց աշխատանքային օրապահիկը հազիւ երկու ամբերիկեան տոլար է», ըսաւ Սամին՝ պզտիկ ժպիտ-յուզում մը դէմքին վրայ:

Անկախ այն ստեղծուած տպա-

ւորութենէն, որ ստացած էինք մեր այցելութենէն առաջ, թէ՛ երկիրը կրնայ անապահով ըլլալ... Եւ տեսնելով աղքատութիւնն ու տագնապները՝ դիւրին եղաւ ենթադրել, որ մեր տպաւորութիւնը այդպէս էր... Մենք կրցանք նաեւ տեսնել, որ Քենիա այդքան ալ «անապահով» չէր: «Մեր քաղաքական դեկավարները՝ կառավարութիւն եւ ընդդիմադիր, համաձայնած են, որ երկիրը պէտք է խաղաղ ու ապահով պահեն», ըսաւ Սամին:

Համաձայնած են... խաղաղ ու ապահով պահել երկիրը:

Սամին մեզ կ'առաջնորդէր Նայրոպի մայրաքաղաքի մէջ գետեղուած ու պատրաստուած կենդանաբանական անտառին մէջ: Երեւի աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ մայրաքաղաքին մէջ քաղաք՝ երկրի կենդանիներուն համար, որոնք կ'ապրին իրենց տարբերութիւններով: Այս անտառ-քաղաքին մէջ կրցայ տեսնել Աստուծոյ ստեղծագործութեան հրաշալիքը: Ան ստեղծեց երկինքն ու երկիրը, նաեւ՝ կենդանիներն ու, տակաւին, մարդը: Այս բոլորը՝ միասին եւ միասեղ: Ստեղծագործութենէն ետք Աստուած յանձնարարեց. «Աճեցէք ու բազմացէք»: Քենիան ցցուն ու ապրող մէկ լաւ օրինակն է միասին ապրելու ու, տակաւին, բազմանալու իրականութեան:

Եթէ մէկ կողմէ կ'ըմբռնենք երկրին ու անոր բնութեան գեղեց-



կութիւնը (թէկուզ՝ իր ոչ զարգացած ու աղքատ իրավիճակներով), միւս կողմէ՝ նաեւ կենդանիներն ու, տակաւին, մարդիկ. բոլորն ալ՝ մէկ ամբողջութեան ընդմէջէն: Իսկ Սամիին համար «մեր կենդանիներն» էին, որոնք հարազատ էին: Երջագայութեան ժամանակ պահ մը կանգնեցուց ինքնաշարժը. «Կը զգամ, որ առիւծ մը կայ մօտերը», ըսաւ ան: Սամին, կարծէք, սորված էր իւրաքանչիւր շարժում իր երկրին մէջ: Չուշացաւ առիւծը... Սկսանք դիտել «ոչ հաճելի» տեսարանը, երբ առիւծը սկսաւ հալածել եղնիկները... Անօթի էր...

Սամին ունէր իր պատմութիւնը իր երկրին մէջ:

«Փողոցին մէջ մեծցած եմ,- ըսաւ ան:- Մտորներս զիս լքած էին, չէի ճանչնար զիրենք»: Երիտասարդ ամուսնու գինքը որդեգրած է: Սամին որդեգրող հայրը փորձուգալցի է, իսկ մայրը՝ սերայ: Անոնք կը գործէին Միացեալ ազգերու կազմակերպութեան հետ եւ այս պաշտօնով կ'ապրէին Քենիա: Սամին մեծցած եւ ուսանած է գինք որդեգրող ծնողքին եւ անոնց գաւակներուն հետ: Երբ ընտանիքը աշխատանքի պատճառով փոխադր-



ուած է Չիլի, Սամին միացած է անոնց՝ որպէս ընտանիքի մէկ անբաժան գաւակը: «Բաւերը բաւարար չեն ըսելու ձեզի, թէ որքան ինքնա՞ վայելցի զիս որդեգրող մօրս կողմէ,- ըսաւ Սամին.- Իսկ անոնց գաւակները դարձան իմ եղբայրն ու քոյրը»:

Որդեգրող սերայ մայրը իր ամբողջ «սէրը» դրած է Սամիին մէջ: Ոչ թէ միայն այդ, այլ ամէն միջոցի դիմած է, որպէսզի Սամին կարենայ գտնել իր կենսաբանական մայրը: Մեկնելով իր պետական յատուկ կապերէն՝ կրցած է ընել այդ:

«Շատ դժուար էր ինծի հանդիպիլ իմ իսկական մօրս», ըսաւ Սամին՝ շարունակելով բաժնեկցիլ իր պատմութիւնը մեզի հետ: Հանդիպումի ընթացքին կար իր մօր խօսքերը. «Գիտե՞մ, պիտի չկարենաս ներել զիս», ըսած է մայրը Սամիին:

Սամին չէ կրցած ներել իր կենսաբանական մայրը: Ան վերադարձած է Չիլի: Որդեգրող մայրը կրցած է «սորվեցնել» Սամիին, որ իր սրտէն պէտք է դուրս հանէ ատելութիւնը: Սամին վերադարձած է Քենիա եւ միացած... մօրը: «Հիմա երկու մայր ունիմ,- ըսաւ Սամին:- Որդեգրող մայրս տարին երկու անգամ կ'այցելէ ինծի եւ ամէն շաբաթ կը հեռաձայնէ: Իսկ իրենց գաւակներուն հետ կը շարունակեմ յարաբերիլ որպէս հարազատ քոյր եւ եղբայր»:

Չուշացաւ իմ հարցումս. «Չե՞ս ուզեր երթալ եւ ապրիլ դուրսը, քանի կարելիութիւն ունիս քեզ որդեգրած ծնողքիդ շնորհիւ»: Սամին պատասխանեց. «Ես կ'ուզեմ հոս մնալ: Քենիան իմ երկիրս է: Ես հոս գործ ունիմ ընելու»:

Սամիին գործը ոչ միայն գրօսաշրջիկները ծանօթացնել է իր գեղեցիկ երկրին, այլ՝ աւելին: Ան իր աշխատանքային ժամերէն աւելի կ'աշխատի բարեսիրական կազմակերպութիւններու հետ, որոնք «փողոցը» մնացած մանուկներուն կը սորվեցնեն, թէ ինչպէ՞ս պէտք է ճիշդ ձեւով ապրիլ իրենց կեանքերը:

Նայրոպիի կենդանաբանական քաղաք-պարտէզին մէջ կայ նաեւ յատուկ բաժին մը՝ «որբացած փրկեցի» համար: Ասոնք այն ձագուկ փրկեցի են, որոնց ծնողները սպանուած են որսորդներու կողմէ կամ՝ տարբեր պատճառներով, ինչպէս, օրինակ, բնութեան եւ անտառներու անտեսումի պատճառով: Հետաքրքրական է տեսնել, թէ

ինչպէ՞ս ժողովուրդին ցոյց կուտան, որ անհրաժեշտ է ինքնա՞յս պզտիկ-ձագուկ փրկեցի, մինչեւ որ անոնք մեծնան ու վերադառնան իրենց «տունը»՝ բնութեան ու անտառային աշխարհը...

Ահա՛ ցուցադրութեան ընթացքին տրուած գեկուցում-պատգամը:

Ընդհանուր տնօրէնը այս բաժնին. «Մենք պատասխանատու ենք այս փրկեցուն որբանալուն, որովհետեւ անոնց մայրերը սպանուեցան, որպէսզի իրենց փրկուներով զարգէր շինուին ու ծախուին մարդուն: Մենք պէտք է սորվեցնենք, որ մեր երկրին կենդանիները եւ անտառները պէտք է պահենք՝ որպէս մեր երկրի հարստութիւն»:

«Մեր երկիրը...»: Քիչ մը ամէն տեղ... Եթէ հոն՝ «մեր երկրին» մէջ անպակաս են մտահոգութիւնները եւ մարտահրաւէրները, բայց կայ ապրելու, շտկելու եւ շինելու գիտակցութիւնը: Քենիա իմ այցելութեան ընթացքին կրցայ նաեւ տեսնել, թէ ինչպէ՞ս անոնք կ'ուզեն ապրիլ «իրենց(մեր) երկրին» մէջ՝ անկախ իրենց դիմագրաւած բոլոր տագնապներէն:

Իւրաքանչիւր անհատ կ'ապրի իր ինքնութեան եւ մշակոյթի հարազատութեան մէջ: Այսպէս եղած են մարդուն եւ ժողովուրդներու պատմա-մշակութային կեանքերու հոլովոյթները: Այդ ինքնութեան եւ մշակոյթի կուռանը կը դառնայ երկիրը՝ իմա՛ հողը: Ինքնութեան եւ մշակոյթի այս «յատուկ» երկիրը կը դառնայ իմս եւ մերը՝ որպէս մեր կեանքերուն ապրելու հիմք տուող իրականութիւն:

Հայուն համար ալ իր ինքնութեան եւ մշակոյթի կուռանը Հայաստանն է: Իմը, իւրաքանչիւր հայուն եւ բոլոր հայերուն: Իմ եւ մեր երկիրը:

Քենիացիին կ'ապրի իր-մեր երկրի հարազատութեան մէջ, որքան որ այդ ըլլայ դժուար:

Հայն ալ կ'ապրի ու պէտք է ապրի իր-մեր երկրի իրականութեան մէջ՝ իր բոլոր դժուարութիւններով հանդերձ...

Այս բոլոր դժուարութիւնները պարտինք վերածել գործի ու, տակաւին, ապրելու մարտահրաւէրի:

«Մենք հոս գործ ունինք ընելու»:

Մեր գործը «մեր երկիրը» պահելն ու շինելն է:

Եթէ քենիացիին համար, բայց անպայմանօրէն՝ նաեւ հայուն:

Մեր(իմ) երկիրը...

# Գարեգին Ա. Խաչատուրեան Պատրիարք Յայոց Կ. Պոլսոյ(1880-1961) Անդրանիկ Առաջնորդը Արեւմտեան Թեմին

ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ԲՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Երախտագէտ Հոգեւորական

Թող ներուրի ինծի սկսելու իմ երկիրցս Կ. Պոլսոյ Հայոց Երջանկալի շատակ Պատրիարքին այցելութիւններու յուշերովս 1955 եւ 1960 թուականներուն, երբ որպէս երախտագէտ երիտասարդ հոգեւորական այցելեցի Կ. Պոլսոյ Պատրիարքարան աջն առնելու եւ օրհնութիւնը ստանալու Ամենապատիւ Գարեգին Խաչատուրեան Պատրիարք Հօր: Առաջին այցելութիւնս ինքնին դպրոց մը եղաւ տեսնելով այն ամէն ինչ որոնց մասին լսեր էինք Պատրիարքարանի հովանիին ներքեւ, շնորհագարդ պատմական հայ եկեղեցիներն ու նորաբաց Ս. Խաչ Դպրեմանքը, Ազգային Հիւանդանոցն ու Շիրշիի գերեզմանատունը, հնաւանդ ազգային եւ օտար հաստատութիւնները, Այս Սոփիայի մայր եկեղեցին ու Թանգարանները: Այցի օրերս պողաբեր դարձան Պատրիարք Հօր հսկողութեան ներքեւ եւ առաջնորդութեամբը Ս. Խաչ Դպրեմանքի տեսուչ Գարեգին Ծ. Վարդապետ Գազանճեանի: Պատրիարք Հօր փափաքով Ս. Պատարագ մատուցի 1955-ի Ս. Աստուածածնի Վերափոխման կիրակին Ֆերիգիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, եւ առիթով մըն ալ հիւրը եղաւ Դպրեմանքի ուսանողութեան կէսօրուան ճաշին՝ տեսուչ Գարեգին Հայր Սուրբի հրաւերով: Զիս Պատրիարք Հօր ներկայացնողը եղաւ մեծ մօրեղբայրս Ազգային Հիւանդանոցի բարերարներէն Մկրտիչ Դերձակեան:

Երկրորդ այցելութեամբ կրկին ստացայ Պատրիարք Հօր օրհնութիւնը երբ Պոլսէն անցնելով Լոնտոն կը վերադառնայի աւարտական տարիս լրացնելու Լոնտոնի համալսարանի դասընթացքին: Այդ առիթով Պատրիարք Հայրը կը պատուիրէր անպայման յաջորդ տարին Ս. Խաչ Դպրեմանք վերադառնալ դասաւանդելու: Ինծի կը մնար որդիական սիրով յանձն առնել: Այս կրկին այցելութեանց միջեւ Գարեգին Պատրիարքը անգամ մը եւս տեսայ երբ Անթիլիաս ժամանեց Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսի հրաւերով 1956 թուին, մինչ Հայոց Հայրապետը կը նախագահէր Անթիլիասի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագին եւ Գարեգին Պատրիարք Հայրը կը քարոզէր ու



եւ կիսազգեստ կը սպասարկէի խորանին: Պատարագին էր Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Գալֆայեան: Ներկայիս հայ հոգեւորականութեան մէջ քիչ են անոնք որոնք ճանչցեր են Ամենապատիւ Պատրիարքը, որոնցմէ մին՝ տողերս գրողը:

## Դժնդակ Տարիներ

Գարեգին Պատրիարքի նախկին տաննամեակները դժնդակ եղան Ա Պատերազմին հետեւանքով, ինչպէս եղան Սիսի Տ.Տ. Սահակ Բ Խաչատուրեան Կաթողիկոսին եւ Կ. Պոլսոյ Պատրիարք Զաւէն Տ. Եղիայեանի համար: Աքսորեալի հանգամանքով Թուրք պետական հրահանգով ընկերակցեցաւ Սահակ Հայրապետին դէպի Երուսաղէմ, եւ երբ Անգլիացիք Պաղեստին մտան, Երուսաղէմէն հոգեւոր հայրերը արդէն դուրս ելած էին Թրքական հրամանագրով եւ ժամանակաւորապէս Դամասկոս ապաստանած: Հոն էր նաեւ Գարեգին Վրդ. Խաչատուրեան, որ իսկոյն Առաջնորդ ընտրուեցաւ իր ծննդավայր Տրապիզոնի Թեմին՝ 1919-1923 տարիներուն, երբ Թեմէն ներս հայ որբեր անխնամ մնացեր էին: Երիտասարդ Առաջնորդ նորապսակ եպիսկոպոսը իսկոյն հոգածու եղաւ 250 հայ որբերուն որոնց համար դպրոցներ բացաւ, ամէն ամիս դպրոցական հանդէսներ կատարել տուաւ որպէսզի անոնք մոռնային անցեալի տառապանքի օրերը:

Այդ օրերուն Գարեգին Եպիսկոպոս ընդդիմացաւ Ամերիկեան որբախնամ վարչութեան պահանջներին եւ չթոյլատրեց որ հայ որբերը ժողովարան երթային աղօթելու, զանոնք միշտ հայ եկեղեցւոյ

հովանիին տակ պահելով եւ ամէն կիրակի գիրենք եկեղեցի առաջնորդելով: Այս պարագան մինչեւ իսկ, ինչպէս ինք յիշած է, «երախաները հացէն գրկուելու» աստիճանին հասցուցած էր, եւ սակայն ինք չէր յուսահատած եւ ժողովուրդին դիմելով միջոցներ գտած ու որբերը ազատած սնունդի եւ պաշտամունքի պարտադրանքէն:

## Թեմակալ Առաջնորդ եւ Յայրապետական Պատուիրակ

Գարեգին Պատրիարք նախապէս 1927 թուին եղաւ Ամերիկահայ Արեւմտեան Թեմի հիմնադիր Առաջնորդը Տ.Տ. Գէորգ Ե Սուրէնեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակով: Որպէս անդրանիկ Առաջնորդը Ամերիկայի Արեւմտեան Թեմին, Գարեգին Արքեպիսկոպոս նախնական եւ բծախնդիր հոգածութիւն ցոյց տուած է Թեմին թէեւ կարճ ատեն մը միայն պաշտօնավարելով, այն ատեն ծանօթ որպէս Գալիֆոռնիոյ Թեմ, առաջնորդանիստ կեդրոն ունենալով հայաշատ Ֆրեզնօ քաղաքը: Յետոյ Գարեգին Արքեպիսկոպոս Տ.Տ. Խորէն Ա Սուրաբեկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն նախ Մարսիլիոյ, եւ ապա 1937-ին Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ նշանակուեցաւ:

Մարսիլիոյ նորահաստատ Թեմին հիմնական գործը գլուխ հանելով, իրեն օժակիցն ու յաջորդը Արմաշական Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքեանն էր որ յաջողեցաւ Մարսիլիոյ Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցին կառուցանել տալ՝ բարերարութեամբ Ասպետ Վահան Խորասանճեանին: Հարաւային Ամերիկայի մէջ երկարատեւ առաջնորդութեամբ, 1937-1950, Գարեգին Արքեպ. Խաչատուրեան եղաւ իսկական հիմնադիրը Արժանթինի Թեմին, Պուենոս Այրեսի մէջ կառուցանել տալով Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին: Գարեգին Վարդապետ Խաչատուրեան Արմաշական գրագէտ, ի բնէ հայերէն լեզուի նկատմամբ գիտուն եւ գերգզայուն եկեղեցական, եղաւ այն հոգեւորականը որ Արժանթինի իր պաշտօնավարութեան տարիներուն ծաղկեցուց իր գրիչը կրօնագիտական եւ գրական իր երկերով՝ երկիրցս Ս. Գրիգոր Նարեկացիի Մատեան Ողբերգութեան հոյակապ մատեանը աշխարհաբարի վերածելով, եւ գրելով Հայ Եկեղեցւոյ

կողմէ բարձրորէն գնահատուած իր ծանօթ «Աշխարհի Լոյսն ի Հայս» երկը:

Նախապէս Տրապիզոնի Առաջնորդ, Գարեգին Վրդ. Խաչատուրեան եպիսկոպոս ձեռնադրուած էր Տ.Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսէն 1922 թուին, եւ ապա յաջորդաբար Մարսիլիոյ եւ Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակի իր պաշտօններէն ետք, 1950 թուին կը բարձրանար Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան գահը, վերջ տալով ընտրապաշարի վեցամեայ խառնակ եւ անկանոն վիճակին, որուն մատնուած էր Պատրիարքութիւնը 1944 թուի Մետրոպ Նարոյեան Պատրիարքի վախճանումէն ի վեր: Կացուց Տ.Տ. Գէորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վճռաբար դիմելով ուղղակի Նախագահ ձեւալ Պաշարին, ու կատարել կուտար Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի ընտրութիւնը: Տաս տարիներ գահակալելէ վերջ, 1961-ի յունիսին Սրբոց Սահակայ եւ Մետրոպայ թարգմանչաց տօնին հինգշաբթի օր Հայոց Պատրիարքը կը վախճանէր յանկարծական մահուամբ պաշտօնի վրայ եւ եկեղեցական պաշտամունքի ընթացքին, որուն կը նախագահէր, իր կողքին ունենալով այցելու Շնորհք Եպիսկոպոս Գալուստեան, որ եղաւ իր արժանաւոր յաջորդ Պատրիարքը: Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոս իսկոյն իսթանպուլ կը ժամանէր անձամբ կատարելու համար վախճանեալ Պատրիարքին վերջին օժումը եւ նախագահելու յուղարկուութեան:

## Սուրբ Խաչ Դպրեմանքը

1953 թուին Գարեգին Պատրիարք անմիջապէս իր ամենէն աւելի նախընտրած ծրագիրը յաջողցուց բացումը կատարելով Ս. Խաչ Դպրեմանքին իսթանպուլի Իւսկիւտար Թաղամասի Ս. Խաչ եկեղեցւոյ կից: Յաջորդ տարուան յունուար 24-ին բացման հանդիսաւոր արարողութեան ներկայ էին իսթանպուլի կուսակալ Ֆահրետտին Քերիմ Կօքաչ, Յունաց Տիեզերական Աթենակորաս Պատրիարքը եւ այլ պաշտօնական անձինք: Դպրեմանքի «չքեղ եւ պատկառելի» շէնքին օրհնութիւնը արդէն

Շար.Պ էջ 19



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9585**

805 E. Broadway, Glendale, CA 91205  
sbmaronian@gmail.com  
CA INSURANCE LICENSE # 0C99815

**MaronianInsurance.com**



HEALTH



LIFE



COMMERCIAL

### Աթանեան Արուեստի Կեդրոնը 25 Տարեկան է



#### ՆԱՅԻՐԱ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

Օրերս Կլենտէյլի Փասիֆիկ համալսարանի կեդրոնի դահլիճում տեղի ունեցաւ Աթանեան արուեստի դպրոցի հիմնադրման 25-ամեակին նուիրուած յոբելեանական երեկոն: 1200-ից աւելի այցելուները հիացմունքով դիտեցին դպրոցի 212 աշակերտների 560 զեղանկարչական, գրաֆիկայի, քանդակի, կերամիկայի եւ տիգայնի հրաշալի ստեղծագործութիւնները:

Ելոյթ ունեցան եւ դպրոցի հիմնադիր հայր եւ որդի Վլադիմիր ու Գոռ Աթանեաններին դրուատանքի, երախտագիտութեան խօսքեր ուղղեցին Լոս Անճելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Բալբուրթեանը, Լոս Անճելոսի քաղաքային խորհրդի անդամ Միթ Ֆարրելի ներկայացուցիչ ձորճ Յակոբեանը: Վերջինս կեդրոնին յանձնեց քաղաքապետարանի պատուգիրը: Պաշտօնական հիւրերի թւում էին նաեւ Կլենտէյլի քաղաքապետարանից Արմէն Աւետեանը, Տորրանսի քաղաքապետարանի արուեստի բաժնի ղեկավար Իվ Ռայդօրտը, Աթանեան արուեստի դպրոցի շրջանաւարտ ճարտարապետ Արմէն Ղազանչեանը:

Կոչեանի ղեկավարութեամբ: Ուշագրավ էին հանրաճանաչ քանոնահարուհի Լիանա Մարտիրոսեանի եւ անգլագական ջութակահար Մերոսթան Մարգարեանի կատարումները:

Անուանի արուեստագետ, արուեստի վաստակաւոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Վլադիմիր Աթանեանը, Կլենտէյլի ի կեանս Ադամանդէ մրցանակակիրը, Արշիլ Գորկու անուան մեդալակիրը, զեղանկարիչն ու քանդակագործը, Ֆրանսայի եւ Իտալիայի միջազգային բիենալիների դիպլոմակիրը Լոս Անճելոսում որդու՝ արուեստագետ Գոռ Աթանեանի հետ 25 տարի առաջ հիմնադրելով արուեստի այս դարբնոցը, ոչ միայն կրթեց իր համար արդէն երրորդ սերնդին, այլեւ մեծապէս նպաստեց Հայաստանում: 25 տարիների ընթացքում դպրոցը հաւատարիմ մնալով իր կոչմանը կրթութիւն է տուել աւելի քան 3500 աշակերտի, որոնց զգալի մասը շարունակելով ուսումը կերպարուեստի ու դիզայնի քոլեճներում եւ համալսարաններում՝ դարձել են բարձրորակ մասնագէտներ, որոնք ունեն լուրջ նուաճումներ: Նրանցից հարկ է նշել Արմէն Ղազանչեանի, Յարութ Դեմիրչեանի, Անճելա Աւանեսեանի,

ները մասնակցել են «Նուիրումի պատկերներ» ցուցահանդէսին՝ նուիրուած քրիստոնէութիւնը պետական կրոն ընդունելու 1700 ամեակին: Առաջնորդարանում եւ «Ջորաեան» թանգարանում կազմակերպուել են մի շարք ցուցահանդէսներ, որոնց թւում՝ Վլադիմիր եւ Արմէն Աթանեանների անհատական ցուցահանդէսները, կեդրոնի սաների աշխատանքները նուիր-

մուտք մտնում ենտը: Կեդրոնի ստեղծագործական համագործակցութեան շրջանակներն ընդգրկել են նաեւ Կլենտէյլի քաղաքապետարանի նախագծերը, Eastern Seals, Sacura of Amerika, Cirque du Soleil, Nasau, Նիւ Եորքի օժտուած երեխաների թանգարան, Հայաստանի Հանրապետութեան կազմակերպած մանկապատանեկան, համահայկական մրցոյթ-փառատո-



ուած եղեռնի 100 ամեակին: Աթանեան արուեստի կեդրոնը համագործակցում է նաեւ Լոս Անճելոսում Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանի հետ, մասնակցելով բազմաթիւ միջոցառումների: Կենտրոնի հիմնադիրներ Վլադիմիր եւ Գոռ Աթանեանները կատարել են մի շարք մտնումենտալ գործեր Հայաստանում եւ այստեղ՝ Կլենտէյլի Փասիֆիկ համալսարանի կեդրոնի նախարահում, Պրպանքում՝ «Մուսա» խճանկարը «Burbank Senior Artist» շքանշանով: Այժմ նրանք իրականացնում են Հոլիվուդի Փոքր Հայաստանի «Դարպաս եւ կարաս»

նը, ձափոնի «Աշխարհի երեխաների» նկարչական մրցոյթ-ծրագրերը: Կեդրոնը համագործակցում է նաեւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի եւ Մշակոյթի նախարարութիւնների հետ:

Ուսումնական կեդրոնի ձեռքբերումներն անխօս կապուած են նաեւ դասաւանդող մանկավարժների անուան հետ: Իրինա Սրայինոնեանի, Պոլյետ Ջարգարեանի, Լուսինէ Սաչիկեանի, Թալին Քելջեանի աջանդն այս կեդրոնում անգնահատելի է, իսկ նուիրումը՝ անսպառ: Նրանք ապրում են իրենց

Շար.ը էջ 18



Յոբելեանական երեկոյի գեղարուեստական մասն սկսուեց «Տրիո սինթեզիկ» խմբի՝ Կարէն Ասատրեան, Արտաշէս Ժաննա, Անի Սինանեանի երաժշտական մասի կատարմամբ: Որպէս շնորհաւորանք իրենց կատարումներով հանդէս եկան կեդրոնի աշակերտուհի Նուարդ Աբրահամեանը՝ հայ երգարուեստի աստղ էլլադա Չախոյեանի նուագակցութեամբ, «Անուշ» պարային համույթը պարուսուցց Անուշ Մարգարեանի ղեկավարութեամբ: Ելոյթ ունեցան նաեւ միջազգային երաժշտական դպրոցից Սուսաննա Աբրահամեանը, Դաւիթ Միքայէլեանը՝ Սուսաննա Ժամ-

նի, Արփի Բաղդասարեանի, Անուշ Շահինեանի, Արփի Շահբանդարեանի, Արմէն Թութունճեանի անունները: Բազմաթիւ պարզեւներն ու պատուոգրերը, ինչպէս նաեւ դպրոցի մասին գրուած մի քանի տասնեակ յօդուածները փաստում են կեդրոնի հսկայական դերը երեխաների զեղագիտական դաստիարակութեան գործում եւ նշանակալից ներդրումը Լոս Անճելոսում: Այս տարիների ընթացքում կեդրոնի աշակերտները մասնակցել են 300-ից աւելի մրցոյթների եւ ցուցահանդէսների՝ շահելով բազմաթիւ պարգէւներ, արժանանալով լաւագոյն մրցանակներին: Դպրոցի սա-

St Gregory Armenian Church  
Celebrating  
**CINCO de MAYO**  
Join Us as We Celebrate the Culture  
From South of the Border  
Friday, May 3, 2019 At 7:30 pm  
2215 E. Colorado Blvd. Pasadena CA 91107  
With  
**Live Mariachi Band and DJ**  
Meet us at Our Build Your Own  
**TACO and BURRITTO BAR**  
And A Variety of Mexican Menu Items  
For Tickets Please Call  
Alice 818-606-6606 Khris 626-201-2704  
Vera (Church office) 626-449-1523  
**Donation \$30 / Kids \$20**



# Դեպի Գողգոթա

ԱԼԼԱ ՍՈՒԵԿԱՍԲԱՐԵԱՆ

Ներհի մէջ կաշկանդուած էր անվերջանալի, անշարժ հարթութիւնը: Շուրջը մղկտացնող տիրութիւն, անեզր տարածք, որ հայեացքի աջեւ կարմիր ամպերի տակից բացուում, դառնում էր հարթավայր: Շէկ գոյնի համատարած թագաւորութիւնն իր մէջ էր առել երկիր ու երկինք:

Գնում էր քարաւանը այս ու այն ճոճուելով չկարողանալով կարծես յենման կէտ գտնել, գնում էր ճոճուելով դատապարտուածի հաշտուածութեամբ:

Գնում էր այն հայոց պատմութիւն դարձած Տէր Զօրի անապատներով դէպի ... ԳՈՂԳՈԹԱ...

Իրիկնացաւ: Քարաւանը կանգ առնելու հրաման ստացաւ: Մարդիկ կոտորատուած ճիւղերի նման փռուեցին աւազներին, բացի արեգարդ մի վանականից որը պտտում քարաւանի մէջ մըմնջալով իրիկնային իր աղօթքը:

Հաչք Հայրական, Հրեշտակ պահպան, Պահեա անասան, Մինչեւ առաւօտեան...

Ժատառոտուած փարաջայի տակից երեւում էին առնական կուրծքն ու բազուկները: Աչքերը յառած անծայրածիր հարթութեանը նա ձեռքերով կրծքին էր սեղել հնամաշ Աւետարանը դարերի խորքից բերուած խօսքերով, որոնք էլ հենց Բանն էին, Աստուծոյ ծանր հայեացք, որ հետեւում էր ամէն մի շարժմանը եւ յաւերժական վէճ Ամենաբարձրեալի հետ, որին հարկաւոր էր ենթարկուել, բայց որի դէմ թուում էր թէ ընդվզել էին ուղու: Աչքերի մէջ մոռաց զպտուածութիւնն էր, զպտուածութիւն, որ ծնել էր հզօր բնաւորութիւն բայց ճնշել հոգու գաղտնարաններում թաքցրել էր ալեկոծ այնպիսի հարցեր, որ մի օր էլ պոռթկալով ունակ էին փոթորիկ բարձրացնել: Մշուշն այդ որում կարծես մերուել էր շրջապատը դրոշմ էր նրան կեդրոնանալ ինքն իր մէջ, իր հոգու ցաւին: Ինքը յուսոյ խօսքերով կը տանի նրանց...

Գիշերուած ամպերը կամաց-կամաց երանգաւորում էին ազդարարելով այգաբացը:

Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, Առ իս լոյս ծագեալ...

Երգում էր վանականը այնպէս գեղեցիկ, ձայնի այնպիսի սքանչելիութեամբ, որ նոյնիսկ գազան եռզբաշին ականջները սրած աշխատում էր բաց չթողել ոչ մի ելեվէջ, ոչ մի թրթիւն:

Անապատի քարացած անծայրածիր հարթութեան մէջ, այգաբացի շողերի ներքոյ ալեգարդ վանականը ձեռքերը կրծքին՝ մի վեհ ու խորհրդաւոր տպաւորութիւն էր թողնում:

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար... Հագիւ էին լուել երգի ելեվէջները, երբ յանկարծ լսուեց հանելի մի ճիչ...

Սկսուեց... դժոխային սպանդը...

Կտրուած ծառի նման ծնկեց վանականը աւազներին... Անապատը լցուել էր ահուելի ճիչ ու վախաստուով... Հրելով երեխաներին դէպի իրենց թիկունքը, մայրերն առաջինն էին ընդունում եաթաղանի հարուածները: Փագազած ասկեարները քաշում, հանում էին կանանց փէշերի տակ թաքնուած փոքրիկներին ու յօշոտով ոռնում հաճոյքից... Խելագարուած

մի ծերունի փորձում էր թողնել թաքցնել աւազների տակ... Յնորուած մի մայր սարսուղացնող քրքիջով ծոցն էր խցկում անգլուխ նորածինի բարուրը... Օ, Տէր աստուած այնպիսի մի ահուելի դատաստան էր երկրի վրայ, որ դժոխքի դեւերն անգամ նախանձից կճաքէին... Հոգեվարքի վերջին վայրկեաններն ապրող մարդիկ յոյսի մի հայեացքով էին նայում վանականի կողմը ու մեռնում հաւատալով...

Լուել էին մեռնող մարդկանց վերջին տնքոցները, սակայն վանականը շարունակում էր ծնկա ճոճուել տեղում... աղթք էր շնջում էր գանտագ, երգ էր թէ կորցրած հաւատքի մըմունջ, Յ՛ ոչ, դա պատարագ էր... հոգեհանգստի պատարագ...

- Դէ բաւ է, ցնդած կեաւուր, նայի, - ճանկելով վանականի ալեգարդ մորուքը եռզբաշին նրա դէմքը շրջեց դէպի ետ՝ դէպ մորթուած քարաւանը, - ես եմ մեպծ թէ քո Աստուածը: Վանականը աչքերը յառած եղեռական տեսարանին, դանդաղ ձեռքը վեր բարձրացրեց.

- Քրիստոս Յարեաւ ի մեռելոց...

- Շուն կեաւուր, - փրփրեց եռզբաշին, կարդա՛ քո աղօթքը, թոյլ եմ տալիս, տեսնենք թէ ինչպէս է յարութիւն առնելու սրանցից մէկը, մատնացոյց անելով դիակներին թքեց եռզբաշին հայհոյելով:

ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ԵՐԿԻՆՍ ԵՄ... աչքերը փակ, գլուխը բարձր, ալեխառն մագերը անապատի քամուց ծածանուելով նա մի անբացատրելի երկիւղ էր ներշնչել դիակների կողքին սեւ անգղների պէս ցցուած ասկեարներին:

Ու երբ հնչեց «ԱՄԷՆ» յանկարծ անապատի գաւելտական լուրթիւնն ընդհատուեց մանկական ուրախ, անուշ դուռնուցով... Յնցուած ասկեարները մօտ վազեցին դիակոյտին եւ նոյնքան էլ արագ ետ ընկրկեցին իրենց տեսածից սարսափած... Կապուտաչեայ մի չքնաղ մանկիկ կիսաքանդ բարուրից խաղում էր մահացած մօր նախազարդ ճակատանոցի հետ:

- Նիրէլի դրան, լրբացաւ եռզբաշին: Տեսարանից ցնցուած ասկեարները աւելի ետ նահանջեցին: Բոլորին տիրել էր վախի ու սարսափի մի գզացում:

- Վախկոտ անասուններ, ցնդած վանականից վախեցաք թէ այս մի բուռ խմորից, գոռաց եռզբաշին դուրս քաշեով արիւնտ եաթաղանը:

- Չհամարձակուես, մռնչած վանականը, չհամարձակուես, եռզբաշին, կ'անիծեմ... քրքած թուրքը: Եթէ այս մտակոյտի մէջ է քո Աստուածը, թափով վեր բարձրացնելով եաթաղանը գոռաց նա, ապա ես կը սպաննեմ քո Աստուծոն, կեա... ա. աաա... Ինչ որ սեւ բան մտրակի պէս խարազանեց եռզբաշին ձեռքը եւ նոյն արագութեամբ էլ ետ թռչելով անհետացաւ իր ետեւից թողնելով միայն գալարաւուն հետքեր աւազների վրայ:

- Շէյթան, շէյթան... գոռգոռալով այս ու այն կողմ փախան ասկեաները թողնելով եռզբաշին շուն ծնկա աւազներին:

Խառը քրտինքը պատել էր դէմքը, ձեռքը ըրպէ առ ըրպէ ուռնում էր, ահուելի ցաւից Չղաձգում էր մարմինը:

Յանուն Ալլահի փրկիր, մարդ Աստուծու, կուչ ու ձիգ անելով աղեր-



սում էր նա:

Վանականը պատուեց փարաջայի ծուկններից մէկը եւ կապեց եռզբաշին ձեռքը, այն ձեռքը որով հենց նոր մորթել էր մի ամբողջ ԱՍՏՈՒԱՍ ՈՒԹԻՆ...

Նա գիտէր, որ ուշ էր եւ որ եռզբաշին դատապարտուած էր, բայց կատարեց իր հայ քրիստոնեայի պարտքը... չէ որ ինքը մարդ էր... անչափ շուտ էր հոգին չարութեամբ լցուելու համար... Իսկ

յետոյ գրկելով մանկանը մօտեցրեց մեռնող թուրքին:

- Նայիր, եռզբաշին, դու չկարողացար նրան սպաննել... քանզի երկու անգամ Քրիստոս չեն սպանում...

Ու... սատկող շնագայլի նման ոռնաց մեռնող եռզբաշին վերջին անգամ նայելով հեռացող վանականին, որը գնում էր տանելով իր ծուռատուած փարաջայի ծոցում մի կապուտաչեայ չքնաղ ՀԱՅԱՍՏԱՆ...

## Հայոց Յեղասպանութիւնը Վերապրած Եպրաքսիա Գեորգեան իր Յարգանքի Տուրքը Մատուցեց Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրին Մէջ



«Արմենիերես» - Հայոց Յեղասպանութիւնը վերապրած, Կարսէն գաղթած Եպրաքսիա Գեորգեանին՝ Ապրիլ 24-ին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի մէջ ծաղիկներ խոնարհելու ցանկութիւնը իրականացաւ:

Եպրաքսիա տատիկին հարազատները Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկ հիմնադրամէն նախապէս անցազիր ստացած էին, որ Եպրաքսիա տատիկին կարենան մեքենայով հասցնել մինչ յուշահամալիր, ապա սալակով ուղեկցիլ անոր:

Ծաղիկներ խոնարհելէն ետք տատիկը խօսեցաւ նաեւ լրագրողներու հետ, պատմեց, թէ ինչպէս գաղթած է: «Կարսէն գաղթած ենք Օշական, յետոյ Աշտարակ, Եղուարդ, սակայն մարդոց համար

այնտեղ արդէն տեղ չկար: Յետոյ գացինք Գիւմրի: Այնտեղ հանդիպեցանք Ասքանազ Մուսեանին (եղած է ԽՍՀՄ Կեդրոնական Գործադիր Կոմիտէի անդամ, յեղափոխական, պետական գործիչ խմբ.), որ մեզ տարաւ երկու յարկանի տուն մը: Ան մեզի ըսաւ՝ մտէք այստեղ, ետլա գացէք, մինչեւ տեսնենք, ինչ կ'ըլլայ», պատմեց տատիկը:

Թէեւ Եպրաքսիան ֆիզիկապէս չկրցաւ շարունակել պատմութիւնը, սակայն պատմելու շատ բան ունէր:

Անձնագիրին մէջ անոր ծննդեան թուականը նշուած է 1914, սակայն ինչպէս անոր թուրք կը նշէ՝ տատիկը աւելի առաջ ծնած է եւ վերջերս նշած է իր 108-ամեակը:

### Գիտաժողով «Կրօններու Դերը Հաւաքականութեան Կեանքերուն Հաշտութեան Եւ Համերաշխութեան Գործընթացքին Մէջ»



Ապրիլ 29-30, 2019, Օմանի Սուլթանութեան մէջ (Արաբական Մոց) տեղի ունեցաւ գիտաժողով մը՝ նուիրուած կրօններու եւ անոնց մասնակցութիւնը հաւաքական կեանքերու հաշտութիւն եւ համերաշխութիւն ստեղծելու գործընթացքին մէջ: Գիտաժողովը կազմակերպուած էր «Ալ Ամանա» Քրիստոնէական կազմակերպութեան նախաձեռնութեամբ՝ եւ որ կը ձգտի ստեղծել կրօններու միջեւ գոյակեցութիւն՝ գիրար հասկնալու միջոցառումներ կազմակերպելով: «Ալ Ամանա» Օմանի Սուլթանութեան մէջ արձանագրուած է որպէս ոչ-հաստատար եւ ոչ-կառավարական կազմակերպութիւն մը՝ որուն յայտագիրները կ'ընդգրկէ խաղաղութեան միջոցառումներ ձեռնար-

կել, կրօններու եւ մշակոյթներու հետ եւ իրարու մինչեւ երկխօսութիւններու ճամբով եւ գիրար հասկնալու ու ճանչնալու յայտագիրներով: Գիտաժողովին ներկայ էին երեսուց եւ հինգ մասնակիցներ՝ որոնք կուզային տարբեր երկիրներէ՝ ինչպէս տարբեր կրօններու կղերականներ, համալսարանական դասախօսներ, ակադեմիական գործիչներ եւ ընկերային-մշակութային կազմակերպութիւններու վարիչներ: Զեկուցողները ներկայացուցին տարբեր նիւթեր՝ ինչպէս կրօնք եւ հաշտութիւն, Սուրբ Գրային գիրքերու դերը հաշտեցումի եւ գիրար ճանչնալու մէջ, հաշտութիւն հաւաքականութիւններու մէջ եւ հաշտութիւն ու ճանաչում խորագիրներով:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՍԷ

ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը եւ այժմ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Այս առթիւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթէ սիրուած անդամուհիին:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՍԷ

Մեր պաշտօնակից The Armenian Observer շաբաթաթերթի արտօնատէր եւ խմբագիր Օշին Քէշիշեան վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած է եւ այժմ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: «Մասիս» արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ հանրայայտ լրագրողին:

Դոկտ. Հրայր Ճէպէճեան, Արաբական Մոցի Աստուածաշունչի Ընկերութեան Ընդհանուր Քարտուղարը՝ որ կը մասնակցէր այս գիտաժողովին՝ ներկայացուց «Աստուածաշունչ մատենի կարգալու եւ ընկալելու գործընթացքը՝ եւ անոր ներդրումը ճանչնալու համար ուրիշը»: Դոկտ. Ճէպէճեան խօսեցաւ հաւաքականութիւններու տարբերութիւններու մասին՝ մատնանշելով լեզուն եւ մշակոյթը որպէս տարբերութիւններու գլխաւոր հիմքերէն: Եւ իւրաքանչիւր անհատ եւ հաւաքականութիւն կ'ապրի իր լեզուի եւ մշակոյթ-սովորութիւններու բովանդակութեանը մէջէն՝ եւ որ նաեւ ժառանգած է իր պատմութեանն եւ սովորութիւններէն: Եւ այս իմաստով՝ մշակոյթը իւրաքանչիւր հաւաքականութեան կեանքերուն կուտայ վերլուծում՝ ապրելու իրենց կեանքերը իրենց գիտակցութեանը մէջէն: Եւ այս իմաստով՝ ան շեշտեց թէ Քրիստոնէական Աստուածաբանութիւնը եւ Աստուածաշունչը կ'օգնէ որ հաւաքականութիւններ իրենց կեանքերը ապրին իրենց սովորութիւններուն մէջէն եւ անոր հարգատուութեամբ:

Հաւաքականութիւններու տարբեր մարտահրաւէրներու մէջէն կը կայանայ: Եւ այս փոխուած կեանքերուն մէջէն է որ կրնաս թիւովարել կեանքի բոլոր էլեւէջներու մէջէն՝ մարդը ինք իր ինքնութեանը մէջէն՝ բաց նաեւ ճանչնալով «օտարը»՝ իմա «ուրիշը»՝ որ տարբեր է եւ ընդունիլ գինք իր տարբերութիւններուն մէջէն: Եւ Աստուածաշունչի այս փոխող կեանքը կ'օգնէ անհատին որպէսզի կրնայ հասկնալ բաց նաեւ յարգել ու տակաւին հոգալ այդ բոլոր «ուրիշները» եւ իրենց տարբերութիւններուն մէջէն: Դոկտ. Ճէպէճեան իր դասախօսութիւնը եզրափակեց բաժնեկցելով իր անձնական վկայութիւնը որպէս հայ: «Մենք՝ որպէս հայ ժողովուրդ՝ ենդարկուեցանք քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեանը՝ եւ ուր մէկ ու կէս միլիոն հայեր նահատակուեցան ըստ ան: Այս իմաստով՝ հայը իր կեանքին մէջ կը կրէ նոյնինքն այս ցեղասպանութեանը ծաւր: Բայց Աստուածաշունչը եւ Քրիստոնէական հաւատքը այդ հայուն ծաւր՝ եւ չեա ցեղասպանութեան պատմութեան հոլովոյթներուն մէջէն՝ հայուն հոգին ոչ թէ վերածած է ատելութեան եւ վրէժխնդրութեան՝ այլ միտած է որ նոյնինքն հայը եւ իր ապրած այդ բոլոր հաւաքականութիւններու կեանքերուն մէջ եւ մէջէն հասկնայ «ուրիշը»՝ եւ տգնի որպէսզի համերաշխութիւն եւ գոյակեցութիւն իրականացնէ իր եւ այդ հաւաքականութիւններուն մէջ նոր կեանքեր կերտելով»:

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ վերլուծում եւ յանձնարարութիւններ ապագայի ծրագիրներու համար:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու  
Տպագրութեան  
եւ Հին Գիրքերու  
Նորոգութեան

### Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### Աթանեսի Արուեստի Կեդրոնը 25 Տարեկան է

Շարունակուած էջ 16-էն  
սաներից իւրաքանչիւրի յաջողութեամբ: Դպրոցի հետ մշտապէս կապի մէջ են նաեւ Արեն Հայրապետեանը, Մոնիկա Համբարձումեանը, Ալեքս Աթանեսանը: Անցած տարիներին մեծ աշխատանք են կատարել Արտակ Աթանեսանը, Թամար Խաչատրեանը, Յարութ Դեմիրչեանը, Վահան Աթանեսանը, Արմէն Ղազանչեանը: Դպրոցում կա նաեւ հայոց լեզվի դասարան, որտեղ դասախօսուած է Նաիրա Մնացականեանը: Դպրոցի տաղանդաշատ սանուհի Լուսին Ենգիբարեանը 2016 թ. Easter Seals համաամերիկեան գեղանկարչական մրցոյթում արժանացել է գլխաւոր մրցանակի: 2017 թուականին այդ մրցոյթում կրկին գլխաւոր մրցանակին արժանացել է Աթանեսան դպրոցի սանուհի Աննա Փիլաշեանը, իսկ 2018-ին՝ Սաբրինա Ալեքսանը: Կարելոր նուաճումներից են ճափոնիայում հոկտեմբերի «Աշխարհի երեխաների» նկարչական 2017 թ. 24-րդ մրցոյթին Նուարդ Աբրահամեանի ստացած պրոնզէ եւ 2018 թ. Հայկ Շահբազեանի 25-րդ մրցոյթի արծաթէ մրցանակները: Կրկին հայեացքս ուղղում եմ «Աթանեսան արուեստի կեդրոնին», այնտեղ կրթուող մեր ապագայ սերունդին՝ փոքրից մինչեւ մեծ: Նրանք Աթանեսան մեծութեան լաւագոյն քանդակներն են: Նրանք իրենց ստացածը փոխանցելու են իրենց զաւակներին: Նրանցից այլ լեւս հնարաւոր չէ հեռացնել հայեցիւթիւնն, արուեստն ու գեղեցիկի հանդէպ սէրը, քանզի նրանք կրում են 25-ամեայ պատմութիւն ունեցող Աթանեսան արուեստի դպրոցի շունչն ու ոգին: Դպրոցի հիմնադրման 25-ամեակին նուիրուած երեկոյի վերջում ցուցահանդէսի մասնակից աշակերտներին յանձնուեցին մեդալներ եւ պատուոգրեր:

### Յաւակցութիւն Ընկ. Յարութ Թաւուքճեանի Մահուան Առթիւ

Ընկեր Յարութ Թաւուքճեանի մահուան տխուր առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական եւ վարչական կազմերը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աշխիւն՝ Տիկ. Անի Մարսէլեան-Թաւուքճեանին, եղբայրներուն՝ Ընկեր Գէորգ եւ Խաչիկ Թաւուքճեաններուն ու քրոջը՝ Տիկին Լենա Ղաֆարիին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

«Մասիս» Շաբաթաթերթ

### Վարչապետի Ուղերձը

Շարունակուած էջ 2-էն

Բայց այստեղ անհրաժեշտ է հաշուի առնել մի քանի կարեւոր հանգամանքներ: Նախ՝ իշխանութիւններին կոնկրետ յանձնարարութիւն տալը հարձէ հասկանալ բառի բուն իմաստով եւ ենթադրել, որ, ասեմք, պիտի այդ հարցով հանրաքուէ անցկացուի, եւ վարչապետն էլ պիտի հանրաքուէի արդիւնքները դնի բանակցութիւններին սեղանին ու մի կողմ քաշուի: Երկրորդ՝ ակնյայտ է, որ արցախեան խնդրի կարգաւորման վերջնականակի վերաբերեալ հասարակութեան մէջ տարբեր կարծիքներ են լինելու, միասնական դիրքորոշումն անհնար է լինելու, եւ ցանկացած դէպքում քաղաքական շահարկումներն ու անգամ ցնցումներն անխուսափելի են լինելու: Եւ երրորդ՝ այս թեմայի շուրջ հանրային դիսկուրսն ընդհանրապէս անիմաստ է, եթէ նոյնպիսի քննարկումներ տեղի չեն ունենում նաեւ Ատրպէյճանում, եւ Ատրպէյճանի հասարակութիւնն ինքն իր համար չի յստակեցնում՝ ո՞րն է ի վերջոյ ի՞ր նպատակը: Նրանք միայն «գրաւեալ տա-

րածքներն» են ուզում, նաեւ Արցախը, թէ՛ «էրիվանն» էլ հետը: Կամ համաձայն են ապրել յաւերժ թշնամանքի մէջ՝ անընդհատ անիմաստ զոհեր տալով շփման գծում ու մշտապէս գտնուելով կարեւորագոյն ենթակառուցողութեան ոչնչացման սպառնալիքի տակ: Եւ ի՞նչ են նրանք պատուիրակում իրենց նախագահին, գնալ եւ բանակցութիւններ սեղանի շուրջ սպառնալիքներ հնչեցնել՝ յոյս ունենալով, որ մի օր դա օգուտ կը տայ: Կամ միջազգային հանրութիւնից «պատերազմի իրաւունք» ստանալ: Բայց հետեւանքները կործանարար կը լինեն առաջին հերթին հենց Ատրպէյճանի համար: Նրանք համաձայն են այդպիսի ռիսկի դիմել:

Այո, նման հանրային դիսկուրս չի եղել նաեւ Ատրպէյճանում, եւ այս իմաստով Նիկոլ ֆաշինեանի ուղերձը երեւի նաեւ Ատրպէյճանի հասարակութեանն էր ուղղուած: Որովհետեւ առանց երկու ժողովուրդների կողմից վերջնականակի յստակեցման բանակցային գործընթացն արդիւնաւէտ լինել չի կարող:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

### «Լարք»ի Գրական-Երաժշտական Երեկոն

Շարունակուած էջ 7-էն

ուեստական դեկավար Գ. Մարտոյեանի) մեզի հրամցողին հայրենական քաղցրահնչիւն երգերու գոգարիկ փունջ մը: Յատկանշական էին «Ջան Երեւան»ը «Մենք թողներն ենք Մաշտոցի»: «Երկիր Հայրենի», «Հրաժեշտ Դպրոցին» եւ «Երազ իմ Երկիր Հայրենի»: Այս բոլորի աւրնեթը Լարք երաժշտանոցի սան-սանուհիները, իրենց ուշագրաւ բաժինն ունէին նաեւ յայտագրին երգ ու նուագի բաժնին մէջ: Աւելի քան տասնեակ մը տարբեր տարիքի շնորհալի տղաք եւ աղջիկներ, երաժշտական ուրույն գործիքներով (Չուլթակ, դաշնամուր եւ թաւ ջուլթակ), գրեթէ առանց նօթատետրի, հանդէս եկան հայ ականաւոր երաժիշտներու ստեղծագործութիւններով: Անոնցմէ ոմանք երկակի էին (դաշնամուր եւ Չուլթակ), ուրիշ մը երրեակ (դաշնամուր, Չուլթակ եւ թաւ ջուլթակ), որոնք իրենց անթերի կատարումներով եւ համարձակ հպումներով, մեծապէս տպաւորե-

ցին բազմահարիւր ներկաները, արժանանալով անոնց որոտնդոտ ծափահարութիւններուն:

Սոյն հոգեպնդիչ միջոցառումն իր աւարտին հասաւ Լարքի Ժրաշան փոխ-տնօրէնուհի Թագուհի Արզումանեանի հայրենաշունչ փակման խօսքով նշելով որ «... անգամ մը եւս ապրեցանք այն հպարտութիւնը որ հայ ժողովուրդի գաւակն ենք...: Մենք կը հաւատանք որ Մասիսն ու Վանը պիտի ազատագրուին եւ Արարատը իր շուրջը պիտի հաւաքէ մեր ժողովուրդը՝ որ անհնարինը կը դարձնէ հնարաւոր...»:

Երաժշտասէր հասարակութիւնը սրահէն բաժնուեցաւ հայրենական լիցքաւորող երեկոյի մը առթած հոգեկան մեծ բաւարարութեամբ եւ մեր պահանջատիրական արդար դատի յաղթանակի յոյսերով:

Այս առթիւ կը շնորհաւորենք օրուան համակարգիչ Թագուհի Արզումանեանը, Լարքի տնօրէնութիւնն ու ուսուցչակազմը եւ յայտագրի բոլոր մասնակիցները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

### Գարեգին Ա. Խաչատուրեան Պատրիարք

Շարունակուած էջ 15-էն

կատարուած էր եւ ներքին գաւառներէն նոր ժամանած էին խումբ մը աշակերտներ: Պաշտօնական բացման օրը Պատրիարք Հայրը սահմանեց դպրեվանքին հիմնադրութեան նպատակն ու ծրագիրը, որոնց համաձայն հաստատութիւնը պիտի ըլլար «կրօնի եւ գիտութեան վարարան», ուր պիտի դաստիարակուէին սաներ՝ դառնալու համար «խկական մարդ, առաքինի քաղաքացիներ, եւ ի վերջոյ հետեւելու այն կոչումին որուն համար սահմանած է գիրենք Աստուած» ինչպէս բնորոշած էր ինք իր խօսքին մէջ:

Սուրբ Խաչ Դպրեվանքի աշակերտութեան թիւը 30-էն 100, եւ շուտով 150-ի բարձրացաւ, իսկ 1964-ի տասնամեակի գրեթէ մէջ ըստուած էր թէ ընդունուած աշակերտութեան թիւը 300-ի կը հասնէր: Երկրորդ հնգամեակին արդէն տուած էր 76 շրջանաւարտներ որոնցմէ երեսուցը իրենց բարձրագոյն ուսումը շարունակած էին տեղական համալսարաններուն մէջ: Այսուհանդերձ, դժբախտաբար դպրեվանքէն հոգեւորականներ դուրս չեկան մինչեւ Գարեգին Պատրիարքի վախճանումը, որմէ ետք առաջին երեքը ձեռնադրուեցան յաջորդ Շնորհք Պատրիարք Գալուստեանի ձեռամբ: Անոնցմէ առաջինը, Գարեգին Պեքճեան, եպիսկոպոսական աստիճան ստացաւ եւ Գերմանիոյ Առաջնորդի պաշտօնը վարեց երկար տարիներ: Միւս երկուքը չմնացին իրենց կոչումին մէջ: Այլ շրջանաւարտներ Երուսաղէմի Ընծայարանը ընդունուեցան եւ իրենց կրօնագիտական ուսումը շարունակեցին եւ ոմանք եպիսկոպոսութեան աստիճան ստանալով մեր օրերու թեմակալ առաջնորդներ դարձան: Անոնցմէ՝ Գարեգին Պեքճեան, Խաժակ Պարսամեան եւ Վիգէն Այքազեան արքեպիսկոպոսները:

ուխտատեղիին ուր 1436 թուին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կառուցուած էր, նոյնիսկ Բիւզանդական կայսրութեան վերջին տարիներուն: Յետագային եկեղեցին վերաշինուած էր Յովհաննէս Կոլոտ մեծանուն Պատրիարքին օրով 1732 թուին երեք մասերով՝ կեդրոնական տաճարով, Ս. Խաչ եւ Ս. Կարապետ մատուռներով: Եկեղեցւոյ քանդումը կը կատարուէր հայոց ծերունագարդ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի վերջին տարիներուն՝ 1958 թուին, իսթանպուլի քաղաքաշինութեան նոր ծրագրի իրագործման համար որուն գոհ կ'երթար ուխտատեղին:

Այցելած եմ ուխտատեղին 1955 թուի ամրան փլուզումէն առաջ եւ տեսած դարաւոր այդ ուխտատեղին եւ աղօթած Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի շիրիմին վրայ: 1958-ի մարտ 15-ի պաշտօնագրով ապաստիականացման (իսթիմլաքի) ցաւալի լուրը կը հաղորդուէր Գարեգին Պատրիարքին, հակառակ Հայոց Պատրիարքութեան կրկնակի դիմումներուն եւ արդարացի պահանջներուն, թէ «եկեղեցին պատմական յուշարձան մըն էր, եւ թէ իսթիմլաքի որոշումը կը հակասէր պետութեան յուշարձաններու պահպանումի կանոնագրին տրամադրութեանց: Մերժելով Պատրիարքարանի դիմումները, նոյն 1958 տարուոյ սեպտեմբեր 12-ի վճիռով եկեղեցւոյ փլուզումը կը կատարուէր ու կ'աւարտէր յաջորդ մայիսին: Ուխտատեղիի վերջին պատարագը կը մատուցուէր հինգշաբթի մայիս 8-ին, նախագահութեամբ Գարեգին Պատրիարքի:

Մէկ բարեբախտութիւն որ կար, քաղաքը կալուածին կէսը միայն պիտի օգտագործէր եւ միւս կէսին վրայ արտօնութիւն կը տրուէր նոր եկեղեցի մը կառուցանելու: Եկեղեցին, ճարտարապետութեամբ Պետրոս Զոպեանի եւ յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, կառուցուեցաւ դասական ճարտարապետութեամբ, եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի շիրիմը հոն փոխադրուեցաւ: Գարեգին Պատրիարքի վախճանումէն ետքն էր որ եկեղեցին աւարտեցաւ եւ օծումը կատարեց Շնորհք Պատրիարք Գալուստեան:

### Ղալաթիոյ Ուխտատեղին

Մինչ Գարեգին Պատրիարքի օրով Ս. Խաչ Դպրեվանքը կը բանար իր դռները, անդին պետութիւնը քանդումի վտանգ կը հրահանգէր Ղալաթիոյ հնագոյն հայ

ուխտատեղիին որ կար, քաղաքը կալուածին կէսը միայն պիտի օգտագործէր եւ միւս կէսին վրայ արտօնութիւն կը տրուէր նոր եկեղեցի մը կառուցանելու: Եկեղեցին, ճարտարապետութեամբ Պետրոս Զոպեանի եւ յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, կառուցուեցաւ դասական ճարտարապետութեամբ, եւ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի շիրիմը հոն փոխադրուեցաւ: Գարեգին Պատրիարքի վախճանումէն ետքն էր որ եկեղեցին աւարտեցաւ եւ օծումը կատարեց Շնորհք Պատրիարք Գալուստեան:

### Հայաստան Արցախ Ֆոնտը

Շարունակուած էջ 7-էն

Մեծն Ներսէս Բարեգործական Կազմակերպութեան, Մուրացյան Երեխաներու Ներգտաբանութեան (Endocrinology) կեդրոնին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական կեդրոնին, եւ Հատուցող Գարակչօգեանի Յիշատակի Ընկերութեան:

2019-ի առաջին չորս ամիսներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը \$4.5 միլիոն արժէքով դեղորայք, բժշկական պիտոյքներ, եւ մարդասիրական այլ օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Անցեալ 30 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու զայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$824 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն, 158 թուիքներով

եւ 2,435 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին ճրիաբար եւ կանոնաւորապէս կ'առաջարկուի միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Մասունեանը եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Մեծապէս կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը տրամադրել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

**ՎԱՃԱՌՈՒՄ Է**  
**գերեզմանի հողատարածք**  
**Forest Lawn կարմիր եկեղեցու բակում**

Արժէքի համար կարող էք զանգել  
**Մաթթին 818-484-0000**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## «Բարսելոնան» Պաշտպանեց Սպանիայի Ախոյեանի Տիտղոսը

Սպանիայի առաջնութեան 35-րդ տուրում «Բարսելոնան» 91 հազար 917 երկրպագուների ներկայութեամբ տանը մրցեց «Լեանտէի» հետ եւ յաղթանակ տարաւ նուագագոյն հաշուով՝ առաջնութեան աւարտից երեք տուր առաջ ապահովելով ախոյեանի տիտղոսը՝ 26-րդը ակումբի պատմութեան մէջ: Կատալոնական ակումբը պաշտպանեց անցած տարի նուաճած ախոյեանական տիտղոսը:



«Լեանտէի» դէմ խաղում միակ կողմ 62-րդ րոպէին խփեց Լիոնել Մեսին, որն օգտագործեց չիլիացի կիսապաշտպան Արտուրո Վիդալի փոխանցումը: Արժեքները յարձակուողը 46-րդ րոպէին փոխարինել էր պրագիլացի կիսապաշտպան Ֆիլիպէ Կոուտինյոյին:

«Բարսելոնան» 83 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ 9 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ: Կոլեբի տարբերութեամբ կատալոնական ակումբը (+54) զգալիորէն գերազանցում է մադրիդցիներին (+29):

Մեսին դարձաւ առաջին ֆուտպոլիստը, որը 10-րդ անգամ դարձաւ Սպանիայի ախոյեան:

### «Մանչեսթըր Սիթին» Վերադարձատ Առաջին Տեղ



Անգլիական Պրեմիեր լիգայի 36-րդ տուրում «Մանչեսթըր Սիթին» մրցակցի խաղադաշտում նուագագոյն հաշուով առաւելութեան հասաւ «Բորնլի» նկատմամբ եւ վերադարձաւ առաջին տեղ: Հիւրերի յաղթական կողմ երկրորդ խաղակէսում խփեց արժեքները յարձակուող Սերխիո Ագուերոն:

Առաջնութեան աւարտից 2 տուր առաջ «Մանչեսթըր Սիթին» մրցաշարային աղիւսակը գլխաւորում է 92 միաւորով եւ մէկ միաւոր առաջ անցաւ երկրորդ տեղ նահանջած «Լիվերպոլից», որն այս տուրում 5:0 հաշուով յաղթել էր յետնապահ «Նոթհեմֆորթին»:

Պրեմիեր լիգայի վերջին 2 տուրերում «Մանչեսթըր Սիթին» կ'ընդունի «Լեսթերին» ու կը հիւրընկալուի «Բրայթօնին», իսկ «Լիվերպոլը» մրցակցի դաշտում կը խաղայ «Նիւքասլի» հետ եւ տնային հանդիպում կ'անցկացնի «Վուլվերհեմփթոնի» դէմ:

### «Չելսին» Ու «Մանչեսթըր Եունայթեդը» Զպարգեցին Յաղթողին

«Մանչեսթըր Եունայթեդը» ու Լոնտոնի «Չելսին» խաղադուլթեամբ բաժանուեցին անգլիական Պրեմիեր լիգայի 36-րդ տուրում: Մանչեսթըրի «Օլդ Տրաֆորդը» ստադիոնում անցկացուած խաղում գրանցուեց 1:1 հաշիւը: 2 կոլերն էլ առաջին խաղակէսում խփեցին սպանացի ֆուտպոլիստները: «Մանչեսթըր Եունայթեդից» աչքի ընկաւ Խուան Մատան, իսկ հիւրերից՝ Մարկուս Ալյոսոն:

«Չելսին» 68 միաւորով մնաց չորրորդ տեղում, իսկ «Մանչեսթըր Եունայթեդը» 65 միաւորով 6-րդն է: 5-րդ տեղում գտնուող Լոնտոնի «Արսենալն» ունի 66 միատուր:

### «Լեսթըրը» Ջախջախեց «Արսենալին»

Անգլիայի ֆուտպոլի պրեմիեր լիգայի 36-րդ տուրի խաղում Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալուելիս խոշոր հաշուով պարտուեց «Լեսթերին»:

Առաջին խաղակէսում կոլեր չգրանցուեցին, սակայն լոնտոնցիները մնացին 10 խաղացողով: Երկու դեղին քարտ ստանալու համար 36-րդ րոպէին դաշտից հեռացուեց հիւրերի կիսապաշտպան Էյսլի Մեյտլենդ-Նայլը:

Երկրորդ կէսում «Լեսթըրը» թուային առաւելութիւնը վերածեց նաեւ նիւթականի: Հանդիպման 59-րդ րոպէին Յուրի Տիլեմանսը բացեց հաշիւը, իսկ 86-րդ եւ 90+5-րդ րոպէներին Ջեյմի Վարդին դուբլ գրանցեց եւ խոշոր յաղթանակ բերեց իր թիմին:

«Արսենալում» հանդէս եկող Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսեց մեկնարկային կազմում, սակայն 73-րդ րոպէին փոխարինուեց:

«Արսենալը» կրեց երրորդ անընդմէջ պարտութիւնը եւ այժմ 66 միաւորով զբաղեցնում է 5-րդ տեղը: «Լեսթերն» այս յաղթանակից յետոյ վաստակեց 51 միաւոր եւ բարձրացաւ 8-րդ հորիզոնական:

## Աշխարհի Զնգակի Ախոյեան Խաջիմուրադ Գացալովը Զանդէս Կը Գայ Զայաստանի Դրօշի Ներքոյ

Աշխարհի հնգակի եւ Աթենքի Օլիմպիական խաղերի ախոյեան ազատ ոճային ըմբիշ Խաջիմուրադ Գացալովը մտադիր է գորգ վերադառնալ:



Ինչպէս տեղեկացնում է Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի պաշտօնական կայքը, մարզիկը պատրաստուած է ելոյթ ունենալ Հայաստանի դրօշի ներքոյ:

Գացալովի տեղափոխութեան գործընթացը մեկնարկել է վերջին շաբաթներին: Գործընթացի բարեյաջող աւարտի դէպքում Գացալովը կարող է մասնակցել Սեպտեմբերին Նուր-Սուլթանում կայանալիք Աշխարհի առաջնութեանը:

Այդ դէպքում Գացալովը կը ներկայացնի Հայաստանը մինչեւ 97 կգ քաշային կարգում:

Մարզիկը վերջին անգամ գորգ է բարձրացել 2016 թուականին:

## Մարգարիտա Գասպարեան Առաջադիմել է, Կարթն Խաջանովը՝ 13-րդ Ռակետ

Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան (ATP) ու կանանց թենիսի ասոցիացիան (WTA) Ապրիլի 29-ին հրատարակել են վարկանիշային թարմացուած աղիւսակները:



Տղամարդկանց պայքարում առաջին ռակետի կոչումը պահպանել է սերբ Նովակ Ջոկովիչը, իսկ կանանց ցուցակը շարունակում է գլխաւորել ճապոնացի Նաոմի Օսական:

22-ամեայ ռուսաստանցի Կարէն Խաջանովը պահպանել է 13-րդ տեղը եւ շարունակում է մնալ Ռուսաստանի առաջին ռակետը:

Ռուսաստանցի Մարգարիտա Գասպարեանը Ստամբուլի մրցաշարի կիսաեզրափակիչ հասնելուց յետոյ բարձրացել է 65-րդ տեղ:

## ՈւեՅԱ-ն 3 Խաղով Որակագրկեց Նեյմարին

ՈւեՅԱ-ն երազաւաթների 3 խաղով որակագրկել է ֆրանսական ՊՍԺ-ի պրագիլացի յարձակուող Նեյմարին, յայտնում է կազմակերպութեան կայքը:



Աւելի վաղ 27-ամեայ ֆուտպոլիստը սոցիալական ցանցերում արած գրառումով քննադատել էր ՊՍԺ - «Մանչեսթըր Եունայթեդը» Ախոյեանների լիգայի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպման մրցավարներին աւելացուած ժամանակում կրկնապատկերը դիտելուց յետոյ ֆրանսական թիմի դարպասին նշանակած 11 մեթրանոցի համար:

«Դա խայտառակութիւն է: Ֆուտպոլից ոչինչ չհասկացող չորս մարդ հեռուստացոյցի մօտ դիտում են դրուակի դանդաղեցուած կրկնապատկերը: Այնտեղ չկար 11 մեթրանոց: Կիմպեմբեն չէր կարող ձեռքը դնել մէջքին», - ինստագրամում գրել էր Նեյմարը, որը վնասուածքի պատճառով չէր մասնակցում այդ խաղին:

Յիշեցնենք, որ «Մանչեսթըր Եունայթեդը» պատասխան խաղում յաղթել է 3:1 հաշուով եւ դուրս եկել քառորդ եզրափակիչ: Առաջին խաղում ՊՍԺ-ն Անգլիայում յաղթել էր 2:0 հաշուով:

## Պոզբան Որոշել է Զեռանալ «Մանչեսթըր Եունայթեդից»

Աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի կիսապաշտպան Պոլ Պոզբան որոշել է հեռանալ անգլիական «Մանչեսթըր Եունայթեդից»:



26-ամեայ ֆուտպոլիստը հրաժարուել է Չինաստանի վիզա ստանալ անգլիական ակումբի նախամրցաշրջանային շրջադաշտութեանը մասնակցելու համար: Պոզբան դիմել է «Մանչեսթըր Եունայթեդի» ղեկավարութեանը՝ պահանջելով իր տրանսֆերի վերաբերեալ բանակցութիւններ վարել Մադրիդի «Ռեալի» հետ:

Ֆրանսացի կիսապաշտպանի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021-ի ամառ: